ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

# ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

# ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

## ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2018

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 4

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 6

ԳԼՈՒԽ 1. ..... 9

ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ, ՋՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ..... 9

1. Բժշկական սպասարկումը ..... 9

2. Նախնական բժշկական զննությունը ..... 22

3. Հոգեբանական աշխատանքները ..... 25

ԳԼՈՒԽ 2. ..... 28

ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ..... 28

1. Պահման պայմանները ..... 28

*1.1. Մեկուսարան* ..... 28

*1.2. Կանանց տեղամաս* ..... 29

*1.3. Պատժախուց և կարանտին* ..... 32

2. Խոհանոցը և սննդի ապահովումը ..... 34

3. Լոգանքի և հիգիենայի ապահովումը ..... 38

4. Ջրամատակարարում ..... 42

5. Կապն արտաքին աշխարհի հետ և զբոսանքը ..... 43

6. Ջբաղվածությունը ..... 49

7. Տարբերակված մոտեցում ..... 51

8. Ազատությունից զրկված անչափահաս անձանց պահման պայմանների և նրանց նկատմամբ վերաբերմունքի առանձնահատուկ պահանջները ..... 52

ԳԼՈՒԽ 3. ..... 59

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ..... 59

1. Քրեակատարողական հիմնարկի անձնակազմը ..... 59

2. Քրեակատարողական հիմնարկի ծառայողների աշխատանքի պայմանները ..... 62

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անազատության մեջ գտնվող յուրաքանչյուր մարդու համար պետք է ստեղծել պահման ու վերաբերմունքի արժանապատիվ պայմաններ: Ցանկացած պարագայում հիմնարար նշանակություն պետք է ունենա անձի համար պետության կանխատեսելի վարքագիծն ու անհատական վերաբերմունքն ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի նկատմամբ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՀ սահմանադրական օրենքը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է վերապահել «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը:

Սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է Պաշտպանի լիազորությունները կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակով քրեակատարողական հիմնարկներ պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր կատարելու Մարդու իրավունքների պաշտպանի հնարավորությունը:

Քրեակատարողական համակարգում ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովումն ունի հիմնարար նշանակություն: Հարցը հատկապես զգայուն է այն առումով, որ վերաբերում է անձանց, ովքեր ունեն հատուկ վերաբերմունքի կարիք: Ազատությունից զրկման վայրում կանայք և անչափահասները կարող են խոցելի դառնալ՝ պայմանավորված, օրինակ, ազատությունից զրկման վայրերում զոհայնացմամբ, սեռական բռնության ենթարկվելու վտանգով, սեռով և տարիքով պայմանավորված առողջապահական և խնամքի հատուկ միջոցների, ընտանիքի անդամների հետ կայուն կապի բացակայությամբ և այլն:

Այս առումով, պետք է նկատի ունենալ, որ կանայք և անչափահասներն անազատության մեջ պահվելու ընթացքում հանդիպում են դժվարությունների, որոնք անհրաժեշտ են դարձնում ուշադրության կենտրոնում պահել նրանց հատուկ կարիքները

(օրինակ՝ բժշկական անհրաժեշտ ծառայությունների հասանելիությունը, հոգեբանական աջակցությունը, պահման բավարար պայմանները, կրթությունը, զբաղվածությունը և այլն):

Պետությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցներն ազատությունից զրկված կանանց և անչափահասների ֆիզիկական և հոգեկան առողջությունն ու բարեկեցությունն ապահովելու համար:

Անազատության մեջ գտնվող կանանց և անչափահասների իրավունքների ապահովման ոլորտում առկա խնդիրները պահանջում են հետևողական աշխատանք: Արդյունքի հասնելու գրավական են չվնասելու սկզբունքը և մասնագիտական մոտեցումներով ղեկավարվելը: Կանանց և անչափահասների նկատմամբ պատշաճ վերաբերմունքը հատկապես կարևոր է՝ ելնելով հասարակության մեջ նրանց հատուկ դերից և արժանապատիվ տեղն ապահովելու հիմնարար գաղափարից:

Այս ոլորտում իրական արդյունքներ արձանագրելու հրամայականը պահանջում է համակողմանի մոտեցում, ինչը, իհարկե, ենթադրում է նաև անդրադարձ քրեակատարողական համակարգում ծառայողների կարգավիճակին ու նրանց աշխատանքի պայմաններին:

Ուստի, ոլորտն ունի համակարգային ուսումնասիրության, առկա խնդիրների վեր հանման և դրանց լուծման կոնկրետ ուղղությունների նախանշման կարիք, ինչն էլ սույն արտահերթ հրապարակային զեկույցը նպատակ է հետապնդում ապահովել:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը հիմնված է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման ստորաբաժանման աշխատակիցների, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի բժիշկ, հոգեբույժ և սոցիոլոգ անկախ փորձագետների 2018 թվականի մայիսի 14-ին ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ իրականացված չհայտարարված մշտադիտարկման հիմնական այցի, դրան նախորդած այլ այցերի, քրեակատարողական հիմնարկից Մարդու իրավունքների Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման արդյունքների վրա:

Զեկույցի կազմման հիմքում դրվել են ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովմանն առնչվող բոլոր անհատական բողոքները, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ընթացքում արձանագրված խնդիրները, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների, միջազգային կառույցների ու հասարակական կազմակերպությունների հրապարակումները:

Մանրամասն ուսումնասիրվել են ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովմանը վերաբերող փաստաթղթերը (ճաշացանկեր, վարվող մատյաններ, բժշկական և այլ վերաբերելի փաստաթղթեր): Իրականացվել է ստացած տեղեկությունների համադրում և վերլուծություն, վեր են հանվել օրենսդրական կարգավորման բացերն ու թերությունները:

Մանրակրկիտ ուսումնասիրման առարկա են դարձել ազատությունից զրկված կանանց և անչափահասների համար նախատեսված պահման պայմանները, նրանց իրավունքների և ազատությունների ապահովման վիճակը: Այցերի ընթացքում տեղի են ունեցել առանձնազրույցներ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների և ազատությունից զրկված անձանց հետ:

Այցի ընթացքում վեր հանված խնդիրները քննարկվել են «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի իրավասու ներկայացուցիչների, այդ թվում՝ ղեկավարի

հետ, արձանագրվել են նաև վարչակազմի ներկայացուցիչների բարձրացրած խնդիրներն ու նրանց կարիքները:

Այցի ընթացքում «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պատրաստակամ համագործակցել է Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների հետ վերջիններիս կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս և ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն:

Արձանագրված խնդիրների առնչությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել են քննարկումներ, որոնց հիման վրա սույն արտահերթ հրապարակային զեկույցը ոչ միայն վեր է հանում ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովմանն առնչվող խնդիրները, այլև մասնագիտական վերլուծությունների հիման ներկայացնում է արձանագրված խնդիրների լուծման իրավական և գործնական մեխանիզմներ, ոլորտի իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկություններ:

2018 թվականի մայիսի 14-ին «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ իրականացված մշտադիտարկման հիմնական այցից առաջ կազմակերպվել է հատուկ դասընթաց: Մասնավորապես, ապրիլի 14-ին և 15-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Եվրոպական միության ու Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում տեղի է ունեցել «Ազատությունից զրկված կանանց նկատմամբ վերաբերմունքի կանոնները» թեմայով վերապատրաստում՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ:

Դասընթացին մասնակցել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Արդարադատության նախարարության ներկայացուցիչներ, քրեակատարողական ծառայողներ, Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի անդամներ, փաստաբաններ և լրագրողներ:

Միջոցառման ընթացքում քննարկվել են ազատությունից զրկման վայրում հղի և կրծքով կերակրող կանանց կենցաղային պայմանները, սննդի և հիգիենայի առանձնակի

կարիքները, անչափահաս դատապարտյալների կրթության, նրանց զբաղվածության հարցերը, արտաքին աշխարհի հետ կապի առանձնահատկությունները և այլն:

Նշված դասընթացը նպատակ է հետապնդել բարձրացնել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ նախատեսվող, այդ պահի դրությամբ չհրապարակված մշտադիտարկման այցի արդյունավետությունը:

# ԳԼՈՒԽ 1.
# ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ, ՁՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

## 1. Բժշկական սպասարկումը

Ազատությունից զրկված ցանկացած անձի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի կարևորագույն տարր է բժշկական սպասարկումը: Սա կարևոր է հատկապես այն առումով, որ ուղղակիորեն կապված անձի առողջության պահպանման իրավունքի հետ: Այս հարցում թերացումները կարող են հանգեցնել անազատության մեջ պահվող անձի նկատմամբ վատ վերաբերմունքի, իսկ անհրաժեշտ հատկանիշների առկայության պարագայում՝ անգամ խոշտանգման հիմնարար արգելքի խախտման: Ազատությունից զրկման, այսինքն՝ սեփական կամքին հակառակ պետության կողմից հարկադրաբար մեկուսացվելուց առաջին պահից սկսած պետությունն է դառնում պատասխանատու անձի առողջության ու կյանքի իրավունքների ապահովման համար: Այս հիմնարար խնդրի լուծման համար անհրաժեշտ է ոչ միայն պատշաճ օրենսդրական համակարգ, այլ նաև մարդկային ու տեխնիկական ռեսուրսներ: Ըստ այդմ, սույն զեկույցում կարևոր տեղ է հատկացված այս հարցերի քննարկմանը:

Մասնավորապես, մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում աշխատում է գինեկոլոգ, վիրաբույժ և ատամնաբույժ (պայմանագրային հիմունքներով): Միջին բուժանձնակազմը համալրված է 4 հերթափոխային և մեկ ցերեկային բուժքույրով: Միջին բուժանձնակազմն աշխատում է հերթափոխով՝ չորս օրը մեկ: Մեկ բուժքույր սպասարկում է երկու տեղամաս (մեկուսարան և կանանց տեղամաս):

Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժինն աշխատում է ծանրաբեռնված գրաֆիկով: Գիշերային և երեկոյան ժամերին բժշկական ծառայությունը

դժվար հասանելի է, քանի որ մեկ հերթապահ բուժքույրը սպասարկում է երկու տեղամասեր:

Մշտադիտարկման այցի ընթացքում ամբուլատոր բժշկական օգնություն ցուցաբերելու համապատասխան մատյանում գրանցված է եղել միջինում օրական 40-50 ընդունելություն կանանց տեղամասում և 25-30 ընդունելություն՝ մեկուսարանում:

Բժշկական անձնակազմում ներգրավված չէ ընդհանուր պրոֆիլի բժիշկ՝ թերապևտ կամ ընտանեկան բժիշկ, ինչի պատճառով թերապևտիկ բնույթի բուժօգնություն տրամադրում է բժշկական սպասարկման բաժնի գինեկոլոգը, իսկ երբեմն՝ վիրաբույժը:

Իրականում, քրեակատարողական հիմնարկում թերապևտիկ ծառայությունը համապատասխան մասնագիտացում ունեցող անձի կողմից ապահովելու խնդիրն ունի առաջնային նշանակություն:

Բժշկական սպասարկման բաժնում որակավորված ընդհանուր մասնագիտացմամբ բժիշկ ընդգրկված լինելու պահանջ են ամրագրում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից թիվ (2006)2 հանձնարարականով ընդունված «Եվրոպական բանտային կանոնները» (այսուհետ՝ Եվրոպական բանտային կանոններ): Նշված կանոնների համաձայն՝ *յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկ պետք է օգտվի առնվազն մեկ որակավորված ընդհանուր բժշկի ծառայություններից*[1]*:*

Հարկ է նշել նաև, որ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ ԽԿԿ) *հատուկ ուշադրություն է դարձնում ազատությունից զրկված անչափահասների բժշկական առանձնահատուկ կարիքներին: Հատկապես կարևոր է, որ անչափահասներին առաջարկվող առողջապահական ծառայությունը խնամքի բազմապրոֆիլ (բժշկական-հոգեբանական-սոցիալական) ծրագրի մի մաս կազմի: Սա ենթադրում է, ի թիվս այլնի, որ պետք է սերտորեն համակարգված լինի հաստատության բժշկական սպասարկման անձնակազմի*

[1] Տե՛ս https://pjp-eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+(2006)+2+on+the+European+Prison+Rules.pdf/e0c900b9-92cd-4dbc-b23e-d662a94f3a96 կայքէջում, կետ 41.1:

*(բժիշկներ, բուժքույրեր, հոգեբաններ և այլն) և այլ մասնագետների միջև աշխատանքը (այդ թվում՝ սոցիալական աշխատողների և ուսուցիչների), ովքեր կանոնավոր կերպով առնչվում են ազատությունից զրկված անձանց հետ: Նպատակը պետք է լինի ապահովել, որ ազատությունից զրկված անչափահասներին տրամադրվող բժշկական սպասարկումը կազմի աջակցության և թերապիայի միասնական համակարգի մաս: Ցանկալի է նաև, որ խնամքի ծրագիրը գրավոր կերպով հասանելի լինի վարչակազմի բոլոր այն ներկայացուցիչներին, ովքեր կարող են մասնակցել դրան*[2]*:*

ԽԿԿ-ն նշել է նաև, որ *ազատությունից զրկված բոլոր անչափահասները պետք է բժշկի կողմից պատշաճ կերպով ենթարկվեն բժշկական զննության քրեակատարողական հիմնարկ ընդունվելուց հնարավորիս սեղմ ժամկետում: Պատշաճ կերպով կատարվելու դեպքում նման բժշկական զննությունը թույլ կտա հաստատության առողջապահական ծառայությանը բացահայտել առողջական խնդիրներ ունեցող անչափահասներին (օրինակ՝ թմրամոլության կախվածություն, ինքնասպանության հակում): Այսպիսի խնդիրների բացահայտումը հնարավորինս վաղ փուլում կնպաստի արդյունավետ կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը հաստատության բժշկական-հոգեբանական-սոցիալական խնամքի ծրագրի շրջանակներում*[3]:

Քրեակատարողական հիմնարկի բոլոր երեք մասնաշենքերում (կալանավորված անձանց պահելու տեղամաս, անչափահասների և կանանց տեղամաս) առանձնացված են բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով բաժիններ: Մեկուսարանում առանձնացված է մեկ կահավորված բժշկական սենյակ՝ այնտեղ պահվող կանանց և անչափահասների բժշկական սպասարկումը կազմակերպելու համար: Ըստ բժշկական անձնակազմի՝ օրվա ընթացքում 2 անգամ իրականացվում է համայց՝ բուժքույրը մոտենում է մեկուսարանի բոլոր խցերին և, ըստ անհրաժեշտության, ցուցաբերում բժշկական օգնություն կամ տրամադրում նշանակված դեղորայքը:

---

[2] Տե՛ս Մալթայի վերաբերյալ 2008 թվականի ԽԿԿ-ի զեկույցը https://rm.coe.int/1680697517 կայքէջում, կետ 148:

[3] Տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 9-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1998 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածը https://rm.coe.int/1680696a73 կայքէջում, կետ 39:

Այցերի ընթացքում մեկուսարանում պահվող ազատությունից զրկված անձինք նշել են, որ հիմնականում շփվում են բուժքրոջ հետ. վերջինս ամեն օր այցելում և հետաքրքրվում է նրանց առողջական վիճակով և տրամադրում բժշկական օգնություն՝ ըստ անհրաժեշտության:

Դրական է այն, որ գինեկոլոգիական ու ատամնաբուժական ծառայության մատուցման համար նախատեսված՝ անչափահասների պահման տեղամասում գտնվող սենյակները համալրվել են բժշկական գույքով, պարագաներով և գործիքներով: Սակայն լիարժեք լուծված չեն դրանք ատամնաբուժական նյութերով և դեղամիջոցներով համալրելու հարցերը: Ատամնաբուժական բժշկական օգնությունը և սպասարկումը հիմնականում կազմակերպվում է ատամնաբույժի միջոցներով ձեռք բերված նյութերով՝ ներառյալ ռենտգեն ինքնաերևակվող ժապավենները:

Ազատությունից զրկված անձանց պնդմամբ՝ քիչ թվով մարդիկ են դիմում քրեակատարողական հիմնարկում աշխատող գինեկոլոգին՝ մասնագիտական խորհրդատվության համար: Այդ մասին են վկայում նաև գինեկոլոգի մոտ այցելության մասին արձանագրող մատյանում կատարած գրառումները, որոնք 2018 թվականի հունվարի 1-ից մինչ մայիսի 14-ի այցի օրը եղել են ընդամենը երկուսը:

Պաշտպանի ներկայացուցիչների կողմից մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ քրեակատարողական հիմնարկի մեկուսարանում պահվում է մշտական բժշկական հսկողության կարիք ունեցող առնվազն երկու կալանավորված անձ, ովքեր, ըստ վերջիններիս տրամադրած տվյալների, ունեն շաքարային դիաբետ: Վերոնշյալ անձանց համար քրեակատարողական հիմնարկում բժիշկ-ներզատաբանի (էնդոկրինոլոգ) խորհրդատվությունները պետք է լինեն պարբերական և դա պետք է իրականացնել՝ ըստ դիսպանսեր հսկողության ժամանակացույցի կամ ըստ անհրաժեշտության:

Օրինակ՝ ազատությունից զրկված անձանցից մեկի պնդմամբ՝ ինքն ունի շաքարային դիաբետ՝ դեկոմպենսացված ընթացքով և բարդացած տեսողության խանգարմամբ, հիպերտոնիկ հիվանդություն, գիրություն: Արյան մեջ գլյուկոզայի պարունակությունը

վերահսկում է ազգականների փոխանցած գլյուկոմետրով, իր մոտ պահում է հակադիաբետիկ և հակահիպերտենզիվ դեղեր: Մեկ այլ անձ նշել է, որ ունի շաքարային դիաբետ և դիֆուզ տոքսիկ խպիպ, արյան մեջ գլյուկոզայի պարունակությունն անձամբ չի վերահսկում, իսկ քրեակատարողական հիմնարկն այն հազվադեպ է կազմակերպում:

Ազատությունից զրկված անձինք հայտնել են նաև, որ լաբորատոր հետազոտությունները կազմակերպվում են վճարովի կարգով՝ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում:

Մշտադիտարկման ընթացքում պարզվել է, որ քրեակատարողական հիմնարկում առկա չեն անհրաժեշտ բժշկական պարագաներ: Օրինակ՝ ունենալով շաքարային դիաբետով հիվանդներ՝ քրեակատարողական հիմնարկը չունի գլյուկոմետրի համապատասխան ստրիպներ (թեսթեր), առկա չեն ատամնաշարի ռենտգեն հետազոտության ինքնաերևակվող ժապավեններ, հղիությունը հաստատող թեսթեր և այլն:

Քրեակատարողական հիմնարկում տարվա կտրվածքով 2 անգամ կատարվում է ազատությունից զրկված անձանց ֆլյուորոգրաֆիկ հետազոտություն, որը պարտադիր բնույթ չի կրում և անձը կարող է հրաժարվել:

Ըստ արձանագրված տեղեկությունների՝ հիվանդությունների կանխարգելման նպատակով քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս կամ այնտեղ պահվելու ընթացքում կանայք և անչափահասները սկրինինգային հետազոտության չեն ենթարկվում:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Ազատությունից զրկված կանանց վարվեցողության և կին իրավախախտների նկատմամբ կիրառվող՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի կանոնների (այսուհետ՝ Բանգկոկյան կանոններ) 6-րդ կանոնի համաձայն՝ *քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս կանանց առողջական վիճակի սկրինինգային հետազոտությունները պետք է ընդգրկեն առաջնային բուժօգնության կարիքների որոշման համապարփակ սկրինինգ և պետք է պարզեն՝*

*ա) սեռական ճանապարհով կամ արյան միջոցով փոխանցվող հիվանդությունների առկայությունը, և, կախված ռիսկային գործոններից, ազատությունից զրկված կանանց կարող է առաջարկվել ՄԻԱՎ-ի հետազոտություն՝ դրան նախորդող և հաջորդող խորհրդատվություններով,*

*բ) հոգեկան առողջության կարիքները, այդ թվում՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարումը և ինքնասպանություն ու ինքնավնասում կատարելու ռիսկերը,*

*գ) ազատությունից զրկված կանանց վերարտադրողական առողջության պատմությունը, այդ թվում՝ ընթացիկ կամ վերջին հղիությունները, ծննդաբերությունը և վերարտադրողական առողջության հետ կապված ցանկացած այլ խնդիրները,*

*դ) թմրամիջոցների կախվածության առկայությունը,*

*ե) քրեակատարողական հիմնարկ ընդունվելուց առաջ սեռական բռնության և բռնության այլ ձևերի ենթարկվելու հանգամանքը[4]:*

Բանգկոկյան կանոնների 18-րդ կանոնի համաձայն՝ *ազատությունից զրկված կանանց պետք է առաջարկվեն առողջապահական կանխարգելիչ միջոցառումներ, ինչիպիսիք են Պապանիկոլաուի թեստերը, կրծքագեղձի և գինեկոլոգիական քաղցկեղի սկրինինգային հետազոտությունները, հավասար հիմունքներով, ինչպես տրամադրվում են ազատության մեջ գտնվող նույն տարիքի կանանց:*

Ավելին, Բանգկոկյան կանոնների 9-րդ կանոնը սահմանում է սկրինինգային հետազոտություններ անցկացնելու պահանջ նաև ազատությունից զրկված կանանց երեխաների համար:

Անչափահասների՝ ազատությունից զրկված վայր ընդունվելու կապակցությամբ ԽԿԿ-ն շեշտել է, որ *անհրաժեշտ է ապահովել, որ հաստատություն նոր ընդունված բոլոր անչափահասները, ինչպես նաև փախուստի դիմած կամ այլ վայր տեղափոխված անչափահասները հաստատություն վերադառնալուց հետո ենթարկվեն բժշկական զննության: Պետք է նաև ապահովել մանկաբույժի կանոնավոր այցելություններ:* ԽԿԿ-ն նշել է նաև, որ *յուրաքանչյուր երեխայի համար պետք է կազմել անձնական բժշկական*

[4] Տե՛ս https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Bangkok_Rules_ENG_22032015.pdf կայքէջում:

*փաստաթուղթ, որը պարունակում է ախտորոշման վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև դրա զարգացման և ցանկացած առանձնահատուկ հետազոտության մասին գրառումներ: Այլ հաստատություն անձի փոխադրման դեպքում նշված փաստաթուղթը պետք է ուղարկվի ընդունող հաստատության բժշկին*[5]*:*

Հիմնարկը չունի մանկաբույժ այն դեպքում, երբ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկը նախատեսված է թե՛ կանանց, թե՛ անչափահասների համար:

Կանանց տեղամասի առաջին հարկում առանձնացված է բժշկական ստացիոնար՝ 2 հիվանդասենյակ 5 մահճակալով և բժշկական սպասարկման երեք աշխատասենյակ՝ բժշկի ընդունելության, բժշկական միջամտությունների և բժշկական անձնակազմի հանգստի սենյակ: Բժշկական սպասարկման ստացիոնար բաժանմունքում ապահովված չեն այդպիսի բուժական հաստատությունների համար օրենքով սահմանված պահանջները: Բժշկական սպասարկման տեղամասն ապահովված չէ ջրով և սանհանգույցով և այնտեղ բուժում ստացող հիվանդները ստիպված են օգտվել շենքի երկրորդ հարկի սանհանգույցից և լոգարանից:

Մեկուսարանում պահվող անձինք չեն օգտվում կանանց տեղամասում նախատեսված բժշկական սպասարկման ստացիոնար բաժանմունքից և միայն խիստ անհրաժեշտության դեպքում են տեղափոխվում առողջապահական այլ հիմնարկներ՝ ստացիոնար բուժման համար: Նրանց բուժումը հիմնականում կազմակերպվում է խցերում:

Բժշկական անձնակազմի հավաստմամբ՝ բժշկական ծառայություններից օգտվելու նպատակով մանկահասակ երեխաները հաշվառվում են Մայակովսկի գյուղի բուժամբուլատորիայում: Բուժամբուլատորիայում մանկաբույժի կողմից երեխայի համար բացվում է բժշկական քարտ, և մինչև երեք տարեկան երեխաների բժշկական սպասարկումը կազմակերպվում է այնտեղ, կամ, ըստ անհրաժեշտության, երեխաները տեղափոխվում են Աբովյան քաղաքի բժշկական հաստատություններ:

---

[5] Տե՛ս Բուլղարիայի վերաբերյալ 2002 թվականի ԽԿԿ-ի զեկույցը https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680694040 կայքէջում, կետ 189:

Մանկահասակ երեխաները տեղափոխվում են առողջապահական այլ հիմնարկներ առանց մոր, քանի որ երեխայի հետ առողջապահական հիմնարկ տեղափոխվելու նպատակով դատապարտյալ կինը (մայրը) պետք է թույլտվություն ստանա Քրեակատարողական վարչությունից, ինչը երկար ժամանակ է պահանջում: Այս պրակտիկան ենթակա է սկզբունքային փոփոխության:

Խնդրահարույց է նաև ազատությունից զրկված անձանց առողջապահական մարմինների բուժական հաստատություններում բժշկական օգնության ապահովման հարցը՝ հատկապես պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում: Բանն այն է, որ, որպես կանոն, մեկ ամսից ավել ժամանակ է անցնում մինչև նշված նպատակով քրեակատարողական հիմնարկը դիմում է Քրեակատարողական վարչություն, իսկ վերջինս էլ ՀՀ առողջապահության նախարարություն: Իրենց ֆինանսական միջոցներով իրենց նախընտրած բժշկի մոտ հետազոտվելու կամ բուժում ստանալու անհրաժեշտության դեպքում դրանք ևս կազմակերպվում են ձգձգումներով (մինչև երեք ամիս կարող է պահանջվել) կամ լինում են դրանք չկազմակերպելու դեպքեր:

Այցի պահին նեղ մասնագիտական խորհրդատվության արդյունքում ազատությունից զրկված մի խումբ անձանց նշանակվել են լաբորատոր-գործիքային հետազոտություններ, սակայն դրանց կազմակերպումը ձգձգվել է, քանի որ նրանցից շատերը սեփական միջոցների հաշվին հետազոտվելու հնարավորություններ չունեն:

ԽԿԿ-ի չափանիշների համաձայն՝ *յուրաքանչյուր դեպքում, երբ ծագում է ազատությունից զրկված անձանց հիվանդանոց տեղավորելու կամ հիվանդանոցի մասնագետների կողմից բուժզննման ենթարկելու անհրաժեշտություն, նրանց հարկավոր է տեղափոխել այնպես և այնքան շտապ, որքան պահանջում է նրանց առողջական վիճակը*[6]:

Չնայած այս պահանջին, «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված կանանց համար

[6] Տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 3-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1992 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածը, https://rm.coe.int/1680696a40 կայքէջում, կետ 37:

ստացիոնար ծառայություն նախատեսված չէ: Կանայք այս հիմնարկ տեղափոխվում են կարճ ժամանակով՝ միայն որոշ լաբորատոր-գործիքային հետազոտություններ անցնելու նպատակով (օրինակ՝ արյան ընդհանուր և բիոքիմիական հետազոտություն, սոնոգրաֆիկ և ռենտգեն հետազոտություն):

Ազատությունից զրկված անձինք հայտնել են նաև, որ քրեակատարողական հիմնարկը չունի և չի էլ տրամադրում անհրաժեշտ դեղորայքը: Այն ստիպված են լինում գնել սեփական միջոցների հաշվին՝ ինքնուրույն կամ ազգականների միջոցով:

Ազատությունից զրկված անձանց կողմից ազգականների միջոցով ձեռք բերվող դեղորայքը գրանցվում է համապատասխան մատյանում, սակայն դա արվում է առանց կոնկրետ դեղամիջոցի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ բժշկական ցուցման: Այսպես, այցի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են դեպք, երբ ազատությունից զրկված անձին ազգականների կողմից փոխանցվել է, ի թիվս այլնի, «Տետրացիկլին» դեղամիջոցը, սակայն նման դեղորայքի օգտագործման բժշկական ցուցում առկա չի եղել:

Դեղերի հաշվառման մատյանների ուսումնասիրությունից պարզվել է, որ քրեակատարողական հիմնարկում հիպոտենզիվ դեղամիջոցները քիչ են: Մշտադիտարկման հիմնական՝ մայիսի 14-ի այցի պահին նույնիսկ ամենաշատ օգտագործվող դեղորայքը վերջացած է եղել («Ամբրոքսոլ»՝ փետրվարի 14-ից, «Ասպիրին»՝ մարտի 19-ից, «Նոշ-Արփի»՝ մարտի 23-ից, «Մալոքս»՝ ապրիլի 29-ից, «Մեզիմ-ֆորտե»՝ հունվարի 1-ից, «Ակտրապիդ»՝ փետրվարի 7-ից) այն պարագայում, երբ դրանցից շատերը ցուցված են եղել ազատությունից զրկված անձանց բուժման համար: Այսպես, շաքարային դիաբետով հիվանդ անձանց ցուցված է եղել «Ակտրապիդ»՝ ամենօրյա ռեժիմով ընդունելու համար, սակայն այն մի քանի ամիս քրեակատարողական հիմնարկում առկա չի եղել:

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ մեկուսարանի բժշկական օգնության և սպասարկման համար նախատեսված սենյակում տեղադրված է բժշկական թախտ, դեղորայքի պահման պահարան, աշխատանքային սեղան, աթոռներ, բժշկական

գործիքների սեղան, կշեռք (այցի պահին չի աշխատել), հասակաչափ և բժշկական թափոնների համար արկղիկ:

Քրեակատարողական հիմնարկում կուտակվող բժշկական թափոնները թափվում են կենցաղային աղբի հետ՝ չպահպանելով օրենքով սահմանված դրույթները:

Այսպես, ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 03-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված) 21-րդ կետի համաձայն՝ *սրածայր թափոնները, դրանց գոյացման վայրում, օգտագործելուց անմիջապես հետո տեղադրվում են մեկանգամյա օգտագործման կարծր (օրինակ՝ պլաստիկ շշերի, մետաղյա կամ կարծր պլաստմասե բեռնարկղի մեջ)՝ կենսաբանական վտանգի նշանը և «Զգույշ սրածայրեր» մակնշումը կրող տարողությունների մեջ: Արգելվում է տեղադրելուց առաջ ներարկիչների ասեղների կրկնակի փակելը կափարիչով և (կամ) ախտահանելը*:

Հավելվածի 25-րդ կետի համաձայն՝ *բոլոր տեսակի բժշկական թափոնները տարողությունների մեջ տեղադրվելուց հետո հերմետիկորեն փակվում են, իսկ ախտաբանաանատոմիական, միկրոկենսաբանական, սրածայր և քիմիական թափոնները նաև կնքվում, ինչից հետո բժշկական թափոնի հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողը լրացնում է պիտակ՝ դրա վրա նշելով տեղադրված բժշկական թափոնի տեսակը, դրա՝ տարողությունում տեղավորելու կոնկրետ ժամը, օրը, ամիսը, տարեթիվը, իր անունը և ազգանունը, ինչպես նաև կազմակերպության անվանումը: Լրացված պիտակն ամրացվում է տարողությանը, որն անմիջապես տեղափոխվում է բժշկական թափոնների ժամանակավոր պահման հատուկ տարածք: Լրացված պիտակը տարողությունից տարանջատվելու հնարավորությունը բացառվում է:*

Նշված ընթացակարգը մասնակիորեն պահպանված է եղել միայն ատամնաբուժական օգնության համար նախատեսված սենյակում, սակայն պոլիէթիլենային շշի վրա բացակայել է «Զգույշ սրածայրեր» մակնշումը:

Մեկուսարանի մասնաշենքում տեղակայված բժշկական սպասարկման համար նախատեսված սենյակն ունի վերանորոգման կարիք: Դեղորայքի պահարանում առանձին փաթեթներով պահվում են ազատությունից զրկված անձանց ազգականների կողմից բերվող դեղորայքը:

Վերոհիշյալ սենյակում հայտնաբերվել է չծածկված (բաց) հոսանքի վարդակ, դեղերի համար նախատեսված պահարանի կողպեքի փոխարեն օգտագործվել է ինքնաշեն փական: Դեղերի փաթեթների համար նախատեսված տուփը գտնվել է հակահիգիենիկ վիճակում, մասնավորապես՝ այնտեղ առկա է եղել ժանգոտած մկրատ, առանց կափարիչի «Դերմազին» կրեմ, առանց ժամկետի և դժվարընթեռնելի դեղահաբերի թիթեղ:

Մեկուսարանի բժշկական սպասարկման բաժնի համար նախատեսված սենյակի դեղորայքի պահման պահարանում հայտնաբերվել են ժամկետանց դեղեր՝ «Ատրոպին սուլֆատ» 5 սրվակ և բժշկական պարագաներ՝ գիպսային վիրակապ: Միաժամանակ, կանանց տեղամասի բժշկական սպասարկման բաժնի սենյակի դեղորայքի պահման պահարանում հայտնաբերվել են ժամկետանց դեղ՝ «Կորգլիկոն» և երակային կաթետրներ:

Քրեակատարողական հիմնարկում են գտնվում տարբեր սննդակարգի անհրաժեշտություն ունեցող ազատությունից զրկված հիվանդ անձինք կամ երբեմն մանկահասակ երեխաներ: Նրանք պատշաճ չեն ապահովվում հատուկ կամ դիետիկ սննդակարգով նախատեսված ճաշատեսակներ, տրամադրվում է միայն հավելյալ սնունդ:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի չափաբաժինները սահմանվում են ՀՀ կառավարության 2015

թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշմամբ[7], որը 2017 թվականի մայիսի 18-ին ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Հատուկ սննդակարգի կապակցությամբ վերոնշյալ որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ *հիմք ընդունելով բժշկի կողմից տրված եզրակացությունը կամ խորհրդատվությունը՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող հղի, կերակրող մայր և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվում է նույն որոշման թիվ 1 հավելվածով նախատեսված սննդատեսակներից պատրաստված համապատասխան ճաշատեսակներ*:

Միաժամանակ, քրեակատարողական հիմնարկում հում սննդամթերք, այդ թվում՝ բանջարեղեն, ընդունելու ընդհանուր արգելքը, խոչընդոտ է երեխաների և ազատությունից զրկված հիվանդ անձանց անհրաժեշտ սննդակարգն ապահովելու համար:

***Ուստի, վերը շարադրվածի հիման վրա անհրաժեշտ է՝***

- ***առավելագույն սեղմ ժամկետներում համալրել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմը (այդ թվում՝ թերապևտի կամ ընտանեկան բժշկի որակավորում ունեցող առնվազն մեկ մասնագետով)՝ հաշվի առնելով հիմնարկի լրակազմն ու բժշկական օգնության և սպասարկման պահանջները***
- ***քրեակատարողական հիմնարկում ապահովել գինեկոլոգիական, մանկաբուժական, ատամնաբուժական, հոգեբուժական, ներզատաբանական և այլ բժշկական նեղ մասնագիտական ծառայությունների պատշաճ հասանելիությունը.***
- ***լիարժեք ապահովել մեկուսարանում պահվող կանանց ստացիոնար պայմաններում բժշկական օգնության և սպասարկման պատշաճ հնարավորությունը.***

---

[7] ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական նվազագույն չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1182-Ն որոշում:

- *ազատությունից զրկված անձանց համար ապահովել սեփական միջոցների հաշվին և իրենց ընտրությամբ այլ բժիշկ մասնագետների ծառայություններից օգտվելու իրավական հնարավորությունը.*
- *առողջապահական մարմինների բուժական հաստատություններում ազատությունից զրկված անձանց բժշկական օգնությունն ու սպասարկումը կազմակերպել ժամանակին և առանց ձգձգումների.*
- *մինչև երեք տարեկան երեխայի խնամքը քրեակատարողական հիմնարկում կազմակերպելու դեպքում ապահովել ազատությունից զրկված մոր կողմից երեխային առողջապահական մարմինների բուժական հաստատություններ ուղեկցման օրենսդրական և գործնական մեխանիզմներ.*
- *պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում լաբորատոր-գործիքային հետազոտությունները կազմակերպել ժամանակին և պատշաճ.*
- *մշակել ազատությունից զրկված կանանց սկրինինգային հետազոտությունների սխեմա՝ սեռավարակների հայտնաբերման, արգանդի պարանոցի և կրծքագեղձի ուռուցքների և այլ հիվանդությունների կանխարգելման նպատակով.*
- *քրեակատարողական հիմնարկն ապահովել անհրաժեշտ դեղամիջոցներով և բժշկական պարագաներով՝ գլյուկոմետրի թեսթեր, ստոմատոլոգիական նյութեր ու ռենտգեն ինքնաերևակվող ժապավեններ և այլն.*
- *կատարելագործել ազատությունից զրկված անձանց ըստ անհրաժեշտության դեղորայքով ապահովելու գործընթացը՝ քրեակատարողական ծառայությանն անհրաժեշտ դեղերի ցանկի ընդլայնման, դրանց քանակի ավելացման և դեղերի ձեռք բերման այլընտրանքային մեխանիզմների ներդրման միջոցով.*
- *ներդնել ազատությունից զրկված անձանց կողմից սեփական կամ մերձավոր ազգականների միջոցների հաշվին ձեռք բերված դեղամիջոցները քրեակատարողական հիմնարկ ընդունելու հստակ մեխանիզմներ՝ առաջնորդվելով բժշկական համապատասխան ցուցմամբ և չվնասելու սկզբունքով.*

- ***ապահովել դեղորայքի պահպանման հիգիենիկ պահանջների խստիվ պահպանումը.***
- ***բացառել ժամկետանց դեղերի առկայությունը քրեակատարողական հիմնարկում և սահմանել դրանց ոչնչացման մեխանիզմներ՝ պահպանելով ժամկետանց դեղորայքի ոչնչացման օրենքով սահմանված ընթացակարգերը.***
- ***ապահովել բժշկական թափոնների հավաքման և փոխադրման օրենքով սահմանված հիգիենիկ և հակահամաճարակային պահանջների պահպանումը.***
- ***մեկուսարանում և կանանց տեղամասում իրականացնել բժշկական սպասարկման համար նախատեսված սենյակների վերանորոգման աշխատանքներ.***
- ***կանանց տեղամասի բժշկական սպասարկման բաժանմունքն ապահովել հոսող ջրով և սանհանգույցով.***
- ***ազատությունից զրկված հիվանդ անձանց, անչափահասների և մանկահասակ երեխաների համար ապահովել հատուկ կամ դիետիկ սննդակարգ՝ այդ դեպքերի համար վերանայելով նաև քրեակատարողական հիմնարկում հում սննդամթերք, այդ թվում՝ բանջարեղեն, ընդունելու ընդհանուր արգելքը:***

## 2. Նախնական բժշկական զննությունը

Քրեակատարողական հիմնարկ մուտք գործած ազատությունից զրկված անձինք նախնական (արտաքին) բժշկական զննության են ենթարկվում հսկիչ-անցագրային կետի առանձնացված սենյակում: Սենյակն ունի մոտ երկու մետր քառակուսի տարածք, չունի պատուհան: Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ սենյակում տեղադրված է միայն մեկ սեղան:

Քրեակատարողական ծառայողների պարզաբանումները վկայում են, որ նախնական բժշկական զննությունը կատարվում է քրեակատարողական հիմնարկի կին աշխատակիցների ներկայությամբ՝ խուզարկության հետ համատեղ, որին ներկա են լինում քրեակատարողական հիմնարկի բուժաշխատողը, հիմնարկի օրվա

պատասխանատու կին հսկիչը և ոստիկանության ուղեկցող գումարտակի կին աշխատակիցը:

**Նկարագրվածն անընդունելի է սկզբունքորեն: Բժշկական զննությունը պետք է իրականացվի միայն բժշկի կողմից՝ ազատությունից զրկման վայրի անձնակազմի լսելիության սահմաններից և տեսադաշտից դուրս:**

Այս հարցում միջազգային կանոնները հստակ են. *ազատությունից զրկված անձանց բուժզննումը (ժամանման պահին կամ ավելի ուշ) պետք է կատարվի ազատությունից զրկման վայրում աշխատող անձնակազմի լսելիության սահմաններից և, եթե համապատասխան բժիշկը հակառակը չպահանջի՝ տեսադաշտից դուրս: Ազատությունից զրկված անձի բուժզննումը պետք է կատարվի ոչ թե խմբերով, այլ անհատական սկզբունքով*[8]*:*

Բժշկական զննությունն իրականացվում է միայն մեկ անգամ, երբ անձն ընդունվում է քրեակատարողական հիմնարկ: Մնացած դեպքերում, երբ անձը տեղափոխվում է դատարան կամ նախաքննության մարմին և վերադառնում է քրեակատարողական հիմնարկ, արտաքին բժշկական զննություն չի իրականացվում:

Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում ԽԿԿ-ն անդրադարձել է նաև ազատությունից զրկման վայրերում իրականացվող բժշկական զննությանը՝ որպես խոշտանգումների կանխարգելման միջոցառում: Մասնավորապես, ԽԿԿ-ն, վերահաստատելով նախորդ տարիների զեկույցներում տեղ գտած հանձնարարականները, նշել է, որ *ազատությունից զրկման վայր ընդունվելիս անձի առաջնային բժշկական զննությունը, հատկապես ստացված վնասվածքների գրանցումն ու հաղորդումը պատշաճ չեն իրականացվում: ԽԿԿ-ն խնդրահարույց է համարել, որ զննությունը կազմակերպվում է անձի՝ ազատությունից զրկման վայր ընդունվելու ընթացակարգի շրջանակներում, ուղեկցող ոստիկանների և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայությամբ՝ խախտելով բժշկական գաղտնիքի պահպանման սկզբունքը:*

[8] Տե՛ս ԽԿԿ-ի 2-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1991 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը, https://rm.coe.int/1680696a3f կայքէջում, կետ 51:

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության 4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ ամփոփիչ դիտարկումների 10-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ *պետությունը միջազգային չափանիշներին համապատասխան պետք է ձեռնարկի արդյունավետ միջոցներ ազատությունից զրկված բոլոր անձանց՝ ազատությունից զրկելու սկզբնական պահից խոշտանգումների կանխարգելմանն ուղղված բոլոր հիմնարար իրավական երաշխիքներից գործնականում օգտվելու հնարավորությունն ապահովելու ուղղությամբ:*

*Նման իրավունքներից է անկախ բժշկի կողմից բժշկական զննության ենթարկվելու իրավունքը, որը պետք է կատարվի ոստիկանության անձնակազմի լսելիության սահմաններից և, եթե համապատասխան բժիշկը հակառակը չպահանջի՝ տեսադաշտից դուրս: Պետությունը պետք է գործնականում երաշխավորի ազատությունից զրկված անձանց հետ առնչվող բժիշկների և այլ բժշկական անձնակազմի անկախությունը, ապահովի, որպեսզի նրանք պատշաճ արձանագրեն և փաստաթղթավորեն վատ վերաբերմունքի կամ խոշտանգման ցանկացած նշան և կասկած:*

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշման 37-րդ կետի համաձայն՝ *բոլոր բժշկական զննությունները պետք է անցկացվեն քրեակատարողական կամ այլ ծառայողների լսողության և տեսողության սահմաններից դուրս*:

***Վերոգրյալի հաշվառմամբ անհրաժեշտ է՝***

- ***ապահովել ազատությունից զրկված անձանց նախնական բժշկական զննության պատշաճ պայմաններ.***
- ***ազատությունից զրկված անձանց արտաքին բժշկական զննությունը կազմակերպել քրեակատարողական հիմնարկի անձնակազմի, ինչպես նաև ուղեկցող ոստիկանի լսելիության սահմաններից և տեսադաշտից դուրս, եթե***

***համապատասխան բժիշկը հակառակը չպահանջի՝ պահպանելով բժշկական գաղտնիքը.***

- ***ազատությունից զրկված անձանց արտաքին բժշկական զննությունը կազմակերպել քրեակատարողական հիմնարկ մուտքի և ելքի յուրաքանչյուր դեպքում:***

## 3. Հոգեբանական աշխատանքները

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում այցի պահին պահվող 116 անձի հետ աշխատելու համար սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնում ներգրավված է 6 մասնագետ (հաստիքացուցակում նախատեսված է 7 հաստիք): Մշտադիտարկման հիմնական այցի ընթացքում քրեակատարողական հիմնարկի միակ հոգեբանը գտնվել է երեխայի ծննդի հետ կապված արձակուրդում:

Քրեակատարողական հիմնարկի սոցիալ-հոգեբանական ծառայության աշխատակիցներն առօրյա աշխատանքում օգտագործում են սեփական մարդկային որակները և կարողությունները: Սա, իհարկե, ինքնին դրական է, սակայն համապատասխան մեթոդների և մասնագիտական մոտեցումների կիրառման վերաբերյալ մանրամասներ այցի ընթացքում չեն ստացվել:

Իրականում, քրեակատարողական հիմնարկում առկա են խնդիրներ կամ ռիսկեր, այդ թվում՝ ազատությունից զրկված կանանց միջև ծագող կենցաղային վեճեր, ազատությունից զրկված կանանց միջև հարաբերությունների կարգավորման, հաղորդակցման, անձանց սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ տեղաբաշխման խնդիրներ, որոնք նեղ մասնագիտական մոտեցումների և կարգավորման կարիք ունեն:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ընդհանրապես քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների հարցը խնդրահարույց է: Մասնավորապես, ազատությունից զրկված

անձանց հետ սոցիալ-հոգեբանական աշխատանքներն ունեն բարելավման կարիք՝ կապված հիմնարկում հարմարվելու, կոնֆլիկտները հիմնարկի ներսում արդյունավետ կանխարգելելու, դատապարտյալների արժեքային և վարքային մոտեցումները փոխակերպելու, հասարակություն վերաինտեգրմանը նախապատրաստելու հետ և այլն:

**«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում սոցիալ-հոգեբանական ծառայությունների համակարգը պետք է ենթարկվի սկզբունքային բարեփոխման, հատկապես հետևյալ հիմնական հարցերում՝**

- **ազատությունից զրկված անձանց միջև հարաբերությունների կարգավորում, հնարավոր կոնֆլիկտների կանխարգելում ու լուծում.**
- **քրեակատարողական ծառայող-ազատությունից զրկված անձ հարաբերությունների կարգավորում, ֆիզիկական և հոգեբանական բռնության ռիսկերի կանխարգելում.**
- **ազատությունից զրկված անձանց հարմարում (ադապտացիա) հիմնարկի կանոնակարգին և կոլեկտիվին, ինչպես նաև վերահարմարում արտաքին սոցիալական միջավայրին.**
- **ազատությունից զրկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում.**
- **ազատությունից զրկված անձանց և արտաքին սոցիալական միջավայրի (ազգականներ, արտաքին տեղեկատվություն, աշխատաշուկայի հնարավորություններ և այլն) միջև կապի և հարաբերությունների պահպանում:**

Բացի այդ, ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցները բացահայտել են, որ առկա է սոցիալ-հոգեբանական ծառայության աշխատակիցների վերապատրաստման անհրաժեշտություն՝ կապված դատապարտյալներին հետաքրքրող հիմնական իրավական հարցերի, մասնավորապես՝ պայմանական վաղաժամկետ ազատման, ներման հիմքերի և կարգի վերաբերյալ և այլն:

Քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված կանանց ներանձնային կոնֆլիկտների կարգավորման և նրանց հուզող հարցերի բարձրաձայնման տեսանկյունից ողջունելի է հիմնարկի պետի մոտ ընդունելության օրերի (ամեն ուրբաթ)

պրակտիկան: Այս հարցում նկատելի է նաև որոշակի դրական մթնոլորտ ազատությունից զրկված անձանց շրջանում:

***Վերը շարադրվածի իրականացման նպատակով անհրաժեշտ է՝***

- ***հիմնովին բարելավել քրեակատարողական հիմնարկի սոցիալ-հոգեբանական ոլորտի աշխատակիցների սոցիալական երաշխիքներն ու աշխատանքային պայմանները, այդ թվում՝ աշխատավարձը.***
- ***քրեակատարողական հիմնարկի սոցիալ-հոգեբանական ծառայության հաստիքների համալրումն իրականացնել՝ հաշվի առնելով մասնագիտական գիտելիքները և ունակությունները.***
- ***իրականացնել ազատությունից զրկված անձանց հետ անմիջականորեն առնչվող հսկիչների, անվտանգության բաժնի ծառայողների, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական ծառայության անձնակազմի վերապատրաստում՝ պատանեկության հոգեբանության, կանանց հոգեբանության, երիտասարդների և կանանց հետ սոցիալական աշխատանքի, սթրեսի կառավարման ու ոլորտային այլ ուղղություններով:***

## ԳԼՈՒԽ 2.

## ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

### 1. Պահման պայմանները

#### *1.1. Մեկուսարան*

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի շենքում պահվում են կալանավորված կանայք, փակ ուղղիչ հիմնարկ տեղաբաշխված ազատազրկման դատապարտված կանայք, ինչպես նաև կալանավորված և դատապարտված անչափահասներ:

Մշտադիտարկման արձանագրվել է, որ քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի շենքային պայմանները գտնվում են ոչ պատշաճ և սանիտարական անընդունելի պայմաններում: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի միջանցքների, ինչպես նաև 9-րդ, 11-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ խցերի, այդ թվում՝ սանհանգույցների պայմանների ուսումնասիրությունից պարզվել է, որ խոնավության աստիճանը բարձր է, միջանցքների և խցերի պատերի և առաստաղների ծեփամածիկը՝ թափված, որոշ տեղերում՝ քանդված և բորբոսնած: Գրեթե նույն վիճակն է արձանագրվել նաև պահեստային և մարմնամարզության համար նախատեսված սենյակներում: Խոնավության բարձր աստիճան է արձանագրվել նաև բաց ռեժիմում պահվող ազատությունից զրկված անձանց համար նախատեսված կացարաններում: Նշված խցերի հատակները նույնպես ունեն վերանորոգման կարիք:

Ուսումնասիրված խցերի մակերեսները կազմել են 13մ$^2$-15մ$^2$, որոնք կահավորված են եղել ազատությունից զրկված 4 անձ պահելու համար: Մշտադիտարկման պահին խցերում տեղաբաշխված է եղել առավելագույնը ազատությունից զրկված 3 անձ, սակայն առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ խցերում պահվել է նաև մինչև ազատությունից զրկված 4 անձ, ինչն առաջացնում է գերբնակեցվածություն:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից արձանագրվել են նաև ոչ պատշաճ վիճակի անկողնային պարագաներ: Նշված խնդիրը քրեակատարողական հիմնարկի պետի հետ քննարկելուց հետո՝ հաջորդ օրը, ստացվել է բանավոր տեղեկություն այն մասին, որ ոչ պատշաճ վիճակում գտնվող անկողնային պարագաները փոխարինվել են նորերով:

***1.2. Կանանց տեղամաս***

Դատապարտյալ կանանց համար «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում նախատեսված է առանձնացված երկհարկանի մասնաշենք (կանանց տեղամաս): Այն հանրակացարանային տիպի է, որի առաջին հարկում են գտնվում բաղնիքը, լվացքատունը, բուժմասը, սառնարանային սենյակը: Մասնաշենքում առանձնացված է խոհանոցային մաս՝ հանձնուքներով ստացված սննդի տաքացման համար:

Նույն մասնաշենքի երկրորդ հարկում տեղակայված են 2 մեծ կացարաններ, որոնցից մեկը նախատեսված է 59 դատապարտյալի համար (այցի պահին փաստացի պահվել են 49 անձ), մյուսը՝ մինչև 19 անձի համար (այցի պահին փաստացի պահվել են 14 անձ): Միաժամանակ, երկրորդ կացարանից վարագույրով առանձնացված է ևս մեկ փոքր կացարան՝ 4 անձի համար (այցի պահին փաստացի պահվել են 3 անձ):

Վերը նշված երկու հիմնական կացարաններում պահվող անձանց թիվը բավականին մեծ է, նախատեսված չէ անձնական տարածություն, և դատապարտյալ կանայք չունեն առանձնանալու հնարավորություն: Այսպիսի վիճակն անընդունելի է, քանի որ կանանց համար ապահովված չեն մասնավոր կյանքի նվազագույն պայմաններ:

Առկա է նաև կացարանների չափերի և այնտեղ պահվող դատապարտյալների թվի հարաբերակցության խիստ տարբերություն:

Իրականում, ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում նշել է, որ *պետք է շարունակական քայլեր ձեռնարկել քրեակատարողական հիմնարկներում խցերի*

*բնակեցվածության աստիճանը նվազեցնելու և յուրաքանչյուր ազատությունից զրկված անձի համար առնվազն 4 քմ բնակելի տարածություն ապահովվելու ուղղությամբ*[9]:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ *ձերբակալված, կալանավորված, դատապարտված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար*:

Այս կապակցությամբ ԽԿԿ-ն խորհուրդ է տրվել *հրաժարվել մեծաթիվ անձանց պահման ձևաչափից՝ վերջինս փոխարինելով ավելի փոքր բնակելի միավորներով: Կանայք բացառություն չեն. ավելի փոքր բնակելի միավորները թույլ են տալիս նրանց առանձնահատուկ կարիքներին առավել համապատասխանեցված մոտեցում որդեգրել*[10]:

Ավելին, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 104-րդ և 105-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն՝ *կիսաբաց և կիսափակ ուղղիչ հիմնարկներում դատապարտյալը պահվում է մինչև վեց մարդու համար նախատեսված բնակելի կացարանում*:

**Կանանց տեղամասի մեկ այլ խնդրահարույց հարց կապված է նրա հետ, որ այդ տեղամասի առաջին կացարանն օրվա հերթապահ պատասխանատուների հսկիչ կետից առանձնացված է ապակե միջնորմով:** Մշտադիտարկման այցի ընթացքում պարզվել է, որ հսկիչ կետում ծառայություն իրականացնող 5 աշխատակիցներից 3-ը եղել են տղամարդիկ: Նույն հարկի մյուս երկու կացարաններում հսկողությունն իրականացվում է դուռը պարբերաբար բացելու միջոցով այն պարագայում, երբ առաջին կացարանը գտնվում է 24 ժամյա անմիջական դիտարկման ներքո՝ սահմանափակելով այնտեղ բնակվող կանանց մասնավոր կյանքի իրավունքը: Խնդիրը սուր է նաև այն պատճառով, որ հսկիչ կետում հերթապահություն են իրականացնում նաև արական սեռի քրեակատարողական ծառայողներ: Ընդ որում, ապակե միջնորմը երկկողմանի թափանցիկ է, իսկ իգական սեռի դատապարտյալների նկատմամբ արական սեռի ծառայողների մշտական հսկողությունը՝ բացահայտ երկուստեք:

---

[9] Տե՛ս https://rm.coe.int/16806bf46f կայքէջում, կետեր 63, 65:
[10] Տե՛ս https://rm.coe.int/168077ff14 կայքէջում, էջ 2:

Անձնական տարածություն չունեցող կանայք ստիպված են փոխել հագուստը, քնել և արթնանալ ծառայողների (այդ թվում՝ արական սեռի) աչքի առաջ: Դա նրանց մշտապես պահում է լարված վիճակում, ստեղծում է տղամարդ հսկիչների կողմից կին դատապարտյալների անձնական տարածքը մշտապես ներթափանցելու ռիսկեր: Այս վիճակը սկզբունքորեն անթույլատրելի է:

Այս առնչությամբ ՄԱԿ-ի 2015 թվականի դեկտեմբերի 17-ի Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (այսուհետ՝ Նելսոն Մանդելայի կանոններ) կանոնների 81-րդ կանոնի 3-րդ կետի համաձայն՝ *ազատությունից զրկված կանանց հսկողությունը պետք է իրականացվի քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միայն կին ներկայացուցիչների կողմից:*

Նշված հարցին անդրադարձել է նաև ԽԿԿ-ն, որը Սերբիա և Մոնտենեգրո կատարված այցերի ընթացքում արձանագրել է, որ քրեակատարողական հիմնարկի կանանց բաժնի խցերում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի արական սեռի ներկայացուցիչները հսկողություն են իրականացրել տեսախցիկների միջոցով, ինչի արդյունքում սահմանափակվել է ազատությունից զրկված կանանց մասնավոր կյանքի իրավունքը: ԽԿԿ-ն արձանագրել է, որ *եթե որոշակի ժամանակահատվածում, հստակ հիմքերի առկայության դեպքում, քրեակատարողական հիմնարկում առկա է տեսախցիկների միջոցով հսկողություն իրականացնելու անհրաժեշտություն, քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պետք է պահպանի արժանապատվության տարրական սկզբունքները, օրինակ՝ խցերում ազատությունից զրկված կանանց հսկողությունը պետք է իրականացվի քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կին ներկայացուցիչների կողմից*[11]:

Մասնաշենքի երկրորդ հարկի սանհանգույցն ունի վերանորոգման կարիք, որտեղ տաք ջուր հասանելի չէ:

***Վերոգրյալի հաշվառմամբ, անհրաժեշտ է՝***

[11] Տե՛ս Սերբիայի և Մոնտենեգրոյի վերաբերյալ 2004 թվականի ԽԿԿ-ի զեկույցը https://rm.coe.int/1680697c8f կայքէջում, կետ 264:

- ***քրեակատարողական հիմնարկի կանանց տեղամասի կացարանների չափերն աստիճանաբար վերափոխել՝ այս ոլորտի միջազգային և ներպետական պահանջների խստիվ պահպանմամբ.***
- ***կանանց տեղամասում բացառել արական սեռի հսկիչների կողմից ապակե միջնորմի միջոցով կացարանի հսկողությունը.***
- ***շարունակական քայլեր ձեռնարկել ազատությունից զրկված անձանց անձնական տարածությամբ ապահովելու ուղղությամբ՝ խնդիրը դիտարկելով ինչպես ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ նվազագույն 4 քմ բնակելի տարածության, այնպես էլ մարդկային արժանապատվության հետ համատեղելի պայմաններով անձնական տարածության տեսանկյունից.***
- ***հսկողություն սահմանել սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պահպանման նկատմամբ՝ ուշադրություն դարձնելով նաև պատշաճ վերանորոգմանը (խոնավությունը նվազեցնելու նպատակով), սանհանգույցների վիճակին, ախտահանման և մակաբույծների ոչնչացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների որակին:***

### ***1.3. Պատժախուց և կարանտին***

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի շենքում է գտնվում միակ պատժախուցը: Այցի պահին պատժախցում պահվող անձինք առկա չեն եղել: Պատժախուցը, այդ թվում՝ սանհանգույցն ունի վերանորոգման կարիք: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն արձանագրել են, որ խցում խոնավության աստիճանը բարձր է, բնական լուսավորությունը՝ ցածր:

Մշտադիտարկումը թույլ է տվել արձանագրել խնդրահարույց հարց, որն առնչվում է բուժանձնակազմի մասնակցությանն անձին պատժախուց տեղափոխելուն:

Մասնավորապես, պատժախուց տեղափոխելը՝ որպես կարգապահական տույժ, նշանակելիս համապատասխան որոշման մեջ դեռևս առկա է բժշկի կողմից ազատությունից զրկված անձի առողջական վիճակի վերաբերյալ նշումներ կատարելու

պրակտիկա: Օրինակ՝ ազատազրկված անձանցից մեկին պատժախուց տեղափոխելու մասին որոշման մեջ արձանագրվել է բժշկի նշում այն մասին, որ ազատությունից զրկված անձի «Վիճակը բավարար է»: Ընդ որում, դա արվում է մինչև պատժախուց անձին տեղափոխելը: Փաստացի, ստացվում է անձին տեղափոխում են պատժախուց բժշկի հաստատումից հետո կամ նրա համաձայնությամբ:

Այս պրակտիկան հակասում է միջազգային իրավաբանությանը: Մասնավորապես, ԽԿԿ չափանիշների համաձայն՝ *բուժանձնակազմը երբեք չպետք է մասնակցի կարգապահական տույժերի որոշումների կայացման գործընթացին, որը կարող է հանգեցնել ցանկացած տեսակի մեկուսի բանտարկության, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջոցառումը կիրառվում է բժշկական նկատառումներով*[12]:

Այսպիսի պրակտիկան խնդրահարույց է նաև այն առումով, որ հակասում է բժշկի նկատմամբ ազատությունից զրկվածի վստահության ձևավորման հայեցակարգին: Այդ կերպ, այս պրակտիկան հակասում է այն հիմնարար գաղափարին, որ բժշկի կամ բուժաշխատողի և ազատությունից զրկված անձի միջև պետք է լինեն բացառապես բժիշկ-պացիենտ հարաբերություններ:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ քրեակատարողական հիմնարկում առկա է 2 կարանտինային խուց: Դրանք գտնվում են պատժախցի հարևանությամբ, որոնց պայմանները գրեթե չեն տարբերվում պատժախցում առկա պայմաններից և նույնպես ունեն վերանորոգման կարիք: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչների պնդմամբ՝ շահագործվում է կարանտինային խցերից միայն մեկը:

***Վերը նշվածի հաշվառմամբ, անհրաժեշտ է՝***

- ***քրեակատարողական հիմնարկում ապահովել մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններով պատժախուց և կարանտինային խցեր՝ հաշվի առնելով հատկապես ազատազրկման առաջին անգամ դատապարտվելու պարագայում ուղղիչ հիմնարկի պայմաններին հարմարվելու կարևորությունը.***

[12] Տե՛ս ԽԿԿ գործունեության վերաբերյալ 24-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 2010 թվականի օգոստոսի 1-ից 2011 թվականի հուլիսի 31-ը, https://rm.coe.int/1680696a88 կայքէջում, կետ 62:

***• բացառել անձին պատժախուց տեղափոխելիս այդ կարգապահական տույժը նշանակելու որոշման հիմքում քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմի որևէ ներկայացուցչի կողմից այդ անձի առողջական վիճակի վերաբերյալ կարծիքը դնելու պրակտիկան:***

## 2. Խոհանոցը և սննդի ապահովումը

Քրեակատարողական հիմնարկի խոհանոցը և ճաշարանը տեղակայված են առանձին մասնաշենքում, որն ունի վերանորոգման կարիք: Մշտադիտարկման այցի ընթացքում պարզվել է, որ խոհանոցի մաքրման համար օգտագործվող քիմիական մաքրող նյութը (քլորի փոշի) պահվել է խոհանոցի պահարանում, սննդի կրկնակի օգտագործման տարայի մեջ՝ առանց պարունակվող նյութի մասին որևէ նշման: Նշված կամ այլ նյութերով սանիտարահիգիենիկ մաքրման աշխատանքների իրականացման, դրանց ժամանակացույցերի, օգտագործման ընթացքում անվտանգության ապահովման կանոնների մասին փակցված տեղեկություններ խոհանոցում չեն հայտնաբերվել: Մաքրման աշխատանքների իրականացման համար ձեռնոցներ և անհրաժեշտ այլ պարագաներ խոհանոցում նույնպես չեն արձանագրվել:

Խոհանոցին կից ճաշարանի տարածքը փոքր է, սեղանները՝ խիտ դասավորված: Ճաշասրահում են կազմակերպվում նաև բանջարեղենի մաքրման աշխատանքները՝ խոհանոցում համապատասխան վայրի և պայմանների բացակայության պատճառով: Ինչպես արձանագրվել է մշտադիտարկման այցի ընթացքում, ճաշի համար անհրաժեշտ կարտոֆիլը պահվել է ճաշասրահի հետնամասում գտնվող պահարանների մեջ:

Պարզվել է նաև, որ քրեակատարողական հիմնարկի հաջորդ օրվա ճաշացանկից օգտվելուց այցի նախորդ օրը հրաժարված կալանավորված անձանց և (կամ) դատապարտյալների ցուցակում առկա է եղել ազատությունից զրկված 15 անձի ստորագրություն: Սա այն պարագայում, երբ Պաշտպանի ներկայացուցիչների դիտարկմամբ ճաշի ավարտին պատրաստված սննդի մեծ մասը թափվել է:

Խնդիրն այն է, որ ճաշացանկից օգտվելուց հրաժարվելու դեպքում ազատությունից զրկված անձինք չեն օգտվում նաև քրեակատարողական հիմնարկի կողմից տրամադրվող հացից, ինչպիսի պարագայում վերջիններս չեն ստորագրում նշված մատյանում՝ հացից օգտվելու նպատակով: Արդյունքում, ազատությունից զրկված անձինք վերցնում են միայն հացը, իսկ իրենց համար պատրաստված ճաշատեսակներից չեն օգտվում. դրանք թափվում են:

2018 թվականի մայիսի 14-ից մայիսի 20-ի ճաշացանկի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ չեն պահպանվում ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական նվազագույն չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1182-Ն որոշմամբ նախատեսված սննդի օրական նվազագույն չափաբաժինները: Օրինակ՝ նշված ժամանակահատվածի համար նախատեսված է եղել ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի տրամադրել ընդամենը 20 գրամ կաթնամթերք: Սակայն վերը նշված որոշմամբ սահմանված է կաթի և կաթնամթերքի դեպքում 100 գրամ, իսկ կաթի փոշու դեպքում 14.3 գրամ չափաբաժին: Բացի այդ, ճաշացանկում հյութ, մրգահյութ կամ միրգ ընդհանրապես նախատեսված չեն եղել:

Սննդամթերքի տրամադրման փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2018 թվականի մարտ ամսին քրեակատարողական հիմնարկում ձու չի եղել, ապրիլին տրամադրվել է 5 օր, իսկ մայիսին՝ 3 օր: Սակայն ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման հավելված 1-ի համաձայն՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի պետք է տրամադրվի մեկական ձու՝ ամսական 6 օր:

Խոհանոցի աշխատակիցները, որպես խնդիր, նշել են, որ ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման մեջ կանաչիներ և համեմունքներ

նախատեսված չեն: Սա, նրանց պնդմամբ, ազդում է պատրաստված կերակուրների համի վրա:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի ազատությունից զրկված գրեթե բոլոր անձինք դժգոհել են սննդի որակից (օրինակ՝ վատ եփած, ոչ ախորժաբեր բրնձով փլավ, ձեռքերով կլորացված հորած պանիր և այլն), սննդի միօրինակությունից (օրինակ՝ եփած կաղամբի, մակարոնեղենի տրամադրման բարձր հաճախականություն), առանձին սննդատեսակների պարբերական բացակայությունից (օրինակ՝ ձու), մրգեր, վիտամիններ և այլ անհրաժեշտ սննդային բաղադրիչներ պարունակող սննդամթերքների հազվադեպությունից կամ բացակայությունից:

Ճաշի ավարտից հետո, ճաշարանում, որպես մնացորդ, առկա է եղել մեծ քանակությամբ պատրաստված ճաշ:

Դատապարտյալները հիմնականում սնվում են հանձնուքներով փոխանցվող սննդամթերքով կամ պատրաստի սննդով, սակայն հաշվի առնելով, որ պատրաստի սնունդը երկար հնարավոր չէ պահել, իսկ ազգականներն ի վիճակի չեն հանձնուք բերելու նպատակով հաճախակի այցելել քրեակատարողական հիմնարկ, դատապարտյալ կանայք գանգատներ են ներկայացրել հանձնուքով հում սնունդ ստանալու արգելքի վերաբերյալ:

Միաժամանակ, հսկիչ-անցագրային կետում հանձնուքների ստուգման համար այցի պահին բավարար սարքավորումներ առկա չեն եղել, հիմնականում օգտագործվել են շարժական մետաղորոնիչ և հարմարեցված կենցաղային և այլ առարկաներ (դանակներ, գդալներ, մկրատներ, սուր ծայրով մետաղյա ձողեր), որոնք, ազատությունից զրկված անձանց պնդմամբ, հանգեցնում են հանձնուքով ստացվող սննդի փչացմանը (օրինակ՝ թխվածք, տոլմա և այլն):

Քրեակատարողական հիմնարկի հսկիչ անցագրային կետի հանձնուքների ընդունման սենյակին կից, ազատությունից զրկված անձանց հանձնուք փոխանցողների համար նախատեսված տարածքում տեղադրված է եղել փայտե արկղ, ենթադրաբար

դիմում-բողոքների համար: Սակայն արկղի վրա կամ դրան կից փակցված չեն եղել դրա նպատակային նշանակության կամ վերահսկման ընթացակարգերի մասին տվյալներ:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում սեփական նախաձեռնությամբ մշակվել է դատապարտյալների և կալանավորված անձանց փոխադրման դեպքում չոր սննդամթերքի տրամադրման հաշվառման ձևաթուղթ, որտեղ առկա է սննդի ստացման վերաբերյալ ազատությունից զրկված անձի ստորագրության համար նախատեսված սյունակ: Ազատությունից զրկված անձանց դատարան կամ այլ վայր փոխադրելիս սննդի տրամադրման կապակցությամբ հաճախ բարձրացվող խնդիրների պարագայում նման նախաձեռնությունը ողջունելի է:

Միաժամանակ, հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկը չունի դիետոլոգ:

Այցի ընթացքում ուսումնասիրվել են սննդի պահեստները, որտեղ առկա են եղել վերանորոգման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն:

Սննդի պահեստում սառցարան առկա չի եղել, ինչի պատճառով սառեցված հավը, կարագը պանիրը և բանջարեղենը (կաղամբ, սոխ) պահվել են նույն սառնարանի տարբեր դարակներում՝ չպահպանելով սննդի անհրաժեշտ ջերմային ռեժիմը:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 20.1-ին կետի համաձայն՝ *քրեակատարողական հիմնարկն ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի պետք է ապահովի նրա առողջությունը պահպանելու համար բավականաչափ սննդարար, որակյալ, լավ պատրաստված ու մատուցված սննդով*:

Եվրոպական բանտային կանոնների 22.3-րդ կանոնի համաձայն՝ *սնունդը պետք է պատրաստվի և տրամադրվի հիգիենիկ պայմաններում*:

***Վերոգրյալի հիման վրա անհրաժեշտ է՝***

- ***քրեակատարողական հիմնարկի խոհանոցում իրականացնել վերանորոգման անհրաժեշտ աշխատանքներ.***

- ***խոհանոցում ապահովել սննդամթերքի վերամշակման, պատրաստման, պահման գոտիների առանձնացված և հարմարեցված համապատասխան պայմաններ.***
- ***քրեակատարողական հիմնարկների խոհանոցում ապահովել պատշաճ սանիտարահիգիենիկ պայմանները և ախտահանիչ նյութերի օգտագործման անվտանգության կանոնները.***
- ***որակական չափանիշների հետ մեկտեղ ապահովել նաև ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի քանակական չափանիշները՝ ապահովելով ոլորտը կարգավորող իրավական ակտով նախատեսված սննդի տեսականին և չափաբաժինները.***
- ***քննարկման առարկա դարձնել հում սննդի որոշ տեսակներ հանձնուքով ստանալու արգելքի վերացման հարցը.***
- ***հսկիչ-անցագրային կետի հանձնուքների ստուգման համար սենյակն ապահովել պատշաճ սարքավորումներով՝ բացառելով ստուգման ընթացքում սննդի փչացումը.***
- ***պահեստներում իրականացնել անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ.***
- ***ապահովել սննդի պահպանման պատշաճ պայմաններ:***

### 3. Լոգանքի և հիգիենայի ապահովումը

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի շենքում առկա է 2 լոգարան՝ յուրաքանչյուր հարկում մեկական: Առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ լոգանքը կազմակերպվում է շաբաթը մեկ անգամ, իսկ որոշ դեպքերում ՝ սառը ջրով: Այս կապակցությամբ ազատությունից զրկված անձինք ներկայացրել են դժգոհություններ:

Այցի պահին լոգարանները գտնվել են սանիտարահիգիենիկ անընդունելի վիճակում, լոգարանների ծեփամածիկը թափված է եղել, որոշ հատվածներում

սալիկները՝ քանդված: Առկա է վերանորոգման և մաքրման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն:

Ավելին, լոգարաններում ազատությունից զրկված անձանց համար բացակայել են հագուստը կախելու հնարավորությունները: Յուրաքանչյուր լոգարանում պատին փակցված է եղել մեկական կախիչ՝ համապատասխանաբար 3 և 7 կեռերով: Բացակայել է նստելու հնարավորություն՝ լոգասենյակներից մեկում առկա է եղել հնամաշ և խարխուլ մեկ աթոռ:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչների պարզաբանումների համաձայն՝ ազատությունից զրկված անձինք լոգանք ընդունելու ժամանակ իրենց հետ բերում են նաև աթոռներ:

Այցի ընթացքում արձանագրվել է նաև, որ քրեակատարողական հիմնարկի կանանց մասնաշենքի առաջին հարկի լոգասենյակը փոքր է՝ կահավորված 3 ցնցուղով: Առկա է վերանորոգման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն:

Լոգասենյակի հանդերձարանային հատվածում հատուկ հարմարությունները բացակայել են: Միաժամանակ, այնտեղ է տեղադրված լվացք չորացնելու մեքենա, իսկ լվացքի միակ մեքենան գտնվել է լոգասենյակի կողքին՝ հատուկ առանձնացված փոքր սենյակում: Լվացքի մեքենան օգտագործվում է անկողնային պարագաների լվացման համար, իսկ հագուստը դատապարտյալ կայանք լվանում են ձեռքով՝ լոգանքի համար նախատեսված օրերին (շաբաթական չորս օր՝ ըստ գրաֆիկի):

Հարցի կապակցությամբ Եվրոպական բանտային կանոնների 19.4-րդ կանոնի համաձայն՝ *պետք է համարժեք հնարավորություններ ստեղծել, որպեսզի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ կարողանա կլիմային համապատասխան ջերմաստիճանի պայմաններում ցնցուղ ընդունել կամ լողանալ, ընդ որում՝ հնարավորության դեպքում ամեն օր, սակայն շաբաթն առնվազն երկու անգամ (իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ)՝ ելնելով ընդհանուր հիգիենայի պահպանության նպատակից,* իսկ 19.7-րդ

կանոնի համաձայն՝ *հատուկ պայմաններ պետք է ապահովվեն կանանց սանիտարական կարիքների համար*[13]:

Լոգանքը և անձնական հիգիենայի պահպանումը մեծ նշանակություն ունեն ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ կանանց ֆիզիկական և հոգեկան առողջության և բարեկեցության համար: Հաշվի առնելով կանանց համար հիգիենայի պահպանման առանձնահատկությունները՝ չափազանց կարևոր է նրանց ապահովել լոգանքի և հիգիենայի պահպանման պատշաճ պայմաններով՝ նախատեսելով համապատասխան հարմարանքներ և ավելի հաճախ լոգանք ընդունելու հնարավորություն:

Քրեակատարողական հիմնարկի մեկուսարանում պահվող գրեթե բոլոր անձինք (9-րդ, 11-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ խցեր) նշել են իրենց հատկացվող հիգիենիկ պարագաների ոչ բավարար քանակի մասին: Դրա հետևանքով նրանք ստիպված են ազգականների միջոցով ձեռք բերել անհրաժեշտ բոլոր պարագաները:

Ազատությունից զրկված անձինք, մասնավորապես, նշել են, որ ամսական ձեռքի մեկ օճառը չի բավականացնում, որպեսզի հոգան իրենց անձնական հիգիենայի պահանջները, հատկապես, եթե հաշվի առնենք, որ օճառն օգտագործվում է նաև լոգանք ընդունելիս: Չի բավարարում նաև ամսական լվացքի 1 օճառը:

Առանձնազրույցների ընթացքում պարզվել է նաև, որ բավարար չէ ամսական 1 սրվակ ատամի մածուկը, որը տրամադրվում է 3 անձի համար: Ատամի խոզանակներ ընդհանրապես չեն տրամադրվում: Բավարար չեն ամսական տրամադրվող հիգիենիկ պարագաները:

Իրային պահեստների և համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզվել է, որ 2017 թվականի ողջ ընթացքում «Աբովյան» քրեակատարողական հիմնարկն ատամի խոզանակ չի ստացել: Դրա հետ միասին, քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները նշել են, որ նախկինում ատամի խոզանակը դատապարտյալներին տրամադրվել է տարին մեկ անգամ (մեկ ատամի

[13] Տե՛ս https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae կայքէջում:

խոզանակը խորհուրդ է տրվում օգտագործել 2-3 ամիս): Ատամի մածուկը տրամադրվում է ազատությունից զրկված 4 անձի՝ 2 սրվակ (100մգ) 1 ամսվա համար:

ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման համաձայն՝ ազատությունից զրկված 1 անձին մեկ ամսվա կտրվածքով նախատեսված է 50 մգ ատամի մածուկ: Բայց քանի որ հիմնարկն ատամի մածուկներ ստանում է 100 միլիգրամանոց սրվակներով, յուրաքանչյուր երկու անձի ստիպված տրամադրվում է մեկական ատամի մածուկ՝ 1 ամսվա համար:

ԽԿԿ-ն չափազանց կարևոր է համարում *ազատությունից զրկված կանանց համար սանիտարական և լվացվելու հարմարությունների անարգել հասանելիությունը, հիգիենայի անհրաժեշտ պարագաների (սանիտարական սրբիչների և տամպոնների) համարժեք քանակության առկայությունը: Այսպիսի հիմնական կարիքների չբավարարելը կարող է ինքնին դիտարկվել որպես արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք*[14]*:*

***Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝***

- ***ազատությունից զրկված անձանց լոգանքի պատշաճ կազմակերպման նպատակով իրականացնել լոգասենյակների վերանորոգման աշխատանքներ.***
- ***ապահովել լվացքի պատշաճ կազմակերպումը.***
- ***ելնելով ազատությունից զրկված կանանց ընդհանուր հիգիենայի պահպանման անհրաժեշտությունից և յուրահատկություններից՝ նախաձեռնել ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություն՝ ազատությունից զրկված անձանց համար նախատեսելով շաբաթական առնվազն 2 անգամ լոգանքի հնարավորություն.***
- ***ազատությունից զրկված կանանց անհրաժեշտ քանակի և որակի հիգիենայի պարագաներով, այդ թվում՝ կանացի խնամքի պարագաներով և խոզանակներով ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության***

[14] Տե՛ս ԽԿԿ գործունեության 10-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1999 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը՝ https://rm.coe.int/1680696a74 կայքէջում, կետ 31:

***քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական նվազագույն չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1182-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:***

## 4. Ջրամատակարարում

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի որոշ խցերում (օրինակ՝ 18-րդ, 20-րդ) առկա է ջրամատակարարման խնդիր: Մասնավորապես, այն հաճախ ընդհատվում է կամ ջրի հոսքը խիստ նվազում է՝ հատկապես առավոտյան ժամերին: Նման պարագայում ազատությունից զրկված անձինք մտահոգություն են հայտնել անձնական հիգիենայի պահպանման կապակցությամբ, քանի որ առկա չէ առավոտյան լվացվելու հնարավորություն և առաջանում են սանհանգույցից օգտվելու հետ կապված խնդիրներ:

Այցի պահին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն արձանագրել են, որ խցերում ջրամատակարարումը եղել է բավարար:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչների պնդմամբ՝ առավոտյան ժամերին ջրի հոսքի նվազման պատճառ կարող է լինել այն, որ առավոտյան ժամերին ջրի ծախսը մեծ է, իսկ ջրի կենտրոնական մղիչը հավանաբար չի հասցնում բավարարել ջրի աճող պահանջը:

***Ուստի, անհրաժեշտ է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ապահովել պատշաճ ջրամատակարարում:***

## 5. Կապն արտաքին աշխարհի հետ և զբոսանքը

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ քրեակատարողական հիմնարկի տեսակցությունների երկու սենյակները, այդ թվում՝ դրանցում գտնվող գույքը ոչ բավարար վիճակում են: Անընդունելի վիճակում են սանհանգույցները: Երկարատև տեսակցության սենյակներից մեկում տեղադրված է եղել սառնարան (այցի պահին քրեակատարողական հիմնարկի աշխատակիցն այն փորձել է նորոգել), իսկ մյուսում՝ անսարք վիճակում գտնվող հեռուստացույց: Այլ տեխնիկայով երկարատև տեսակցությունների սենյակները հագեցված չեն:

Քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների տրամադրած տեղեկությունների համաձայն՝ երկարատև տեսակցությունների ժամանակ անկողնային պարագաներ և սպասք չի տրամադրվում, տեսակցության եկած անձինք, այդ թվում՝ անչափահասները, չունեն զբոսանքի դուրս գալու հնարավորություն՝ առանձնացված զբոսաբակի բացակայության պատճառով: Երեխաների համար առանձնացված չէ նաև մանկական սենյակ:

Երկարատև տեսակցությունների համար նախատեսված երկու մյուս սենյակներն օգտագործվում են քննչական գործողությունների և փաստաբանների հետ տեսակցությունների համար: Դրանցից մեկի սանհանգույցում այցի պահին արձանագրվել է սանիտարական անընդունելի վիճակ:

Համապատասխան մատյանի ուսումնասիրությունը վկայում է, որ քրեակատարողական հիմնարկի դատապարտյալները, այդ թվում՝ անչափահասները քիչ են օգտվում երկարատև տեսակցություններից: Այսպես, «Տեսակցությունների սենյակ կանչվող կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման» մատյանի հիման վրա արձանագրվել է 2018 թվականի ընթացքում երկարատև տեսակցության տրամադրման 22 դեպք:

Ազատությունից զրկված անձինք հիմնականում օգտվում են կարճատև տեսակցությունից, որի համար առանձնացված է ընդամենը մեկ սենյակ: Սենյակում տեղադրված է 4 սեղան՝ աթոռներով, որոնք այցի պահին ոչ բարվոք վիճակում են եղել:

Նույն սենյակում կարող է միաժամանակ կազմակերպվել մի քանի կարճատև տեսակցություն, սակայն դրանց ընթացքում անձանց առանձնացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովված չեն:

Ազատությունից զրկված կանանց՝ արտաքին աշխարհի հետ կապի վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ Բանգկոկյան կանոնների 26-րդ կանոնի համաձայն՝ *ազատությունից զրկված կանանց կապն իրենց ընտանիքի անդամների, այդ թվում՝ երեխաների, երեխաների խնամակալների և օրինական ներկայացուցիչների հետ պետք է խրախուսել և նպաստել բոլոր ողջամիտ միջոցներով: Հնարավորության սահմաններում պետք է հակակշռել իրենց բնակության վայրերից հեռու գտնվող քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված կանանց համար առաջացող անբարենպաստ պայմանները:*

Բանգկոկյան կանոնների 28-րդ կանոնը սահմանում է, որ *երեխաների հետ տեսակցությունները պետք է անցկացվեն այնպիսի միջավայրում, որը նպաստում է տեսակցությունների դրական փորձին, այդ թվում՝ վարչակազմի վերաբերմունքի առումով:*

Ազատությունից զրկված կանանց համար ընտանիքի անդամների և հատկապես՝ երեխաների հետ կապը կորցնելը կարող է մեծ անհանգստություն և տառապանք պատճառել նրանց, որն իր ծանր հետևանքները կարող է ունենալ վերջիններիս հոգեկան առողջության համար: Կանանց համար միայն մեկ քրեակատարողական հիմնարկի առկայությունն, իր հերթին, խոչընդոտում է ազատությունից զրկված անձանց՝ հեռավոր մարզերում բնակվող ազգականներին հաճախակի տեսակցելու հնարավորությունը: Նման պայմաններում չափազանց կարևոր է ազատությունից զրկված կանանց համար արտաքին աշխարհի հետ կապի պահպանմանը նպաստելը՝ ապահովելով տեսակցությունների համար պատշաճ պայմաններ: Ազատությունից զրկված անձանց ընտանիքի հետ կապի անարգել իրացման նպատակով 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել արտաքին աշխարհի հետ կապի արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված

օրենսդրական փոփոխությունների նախագիծ: Մասնավորապես, նախագծով առաջարկվել է բացառել կալանավորված անձի ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքի սահմանափակումը վարույթն իրականացնող մարմնի կողմից, այս իրավունքը սահմանափակելու հնարավորության համար նախատեսել ավելի խիստ պահանջներ՝ նախատեսելով պատճառաբանվածության և պարբերական վերանայման պահանջ:

Քրեակատարողական հիմնարկի կանանց մասնաշենքի տաքսոֆոններից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 116 «թեժ գծի» հեռախոսահամարին հնարավոր է եղել զանգահարել դժվարությամբ, քանի որ փակցված հրահանգները կամ հստակ չեն եղել կամ առհասարակ բացակայել են: Դա ստուգվել է հենց մշտադիտարկման այցի ընթացքում: Խնդիրը քննարկվել է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հետ, ովքեր պատրաստակամություն են հայտնել հնարավորինս սեղմ ժամկետներում տաքսոֆոնների կողքին փակցնել համապատասխան հրահանգները:

Ազատությունից զրկված կանայք դժգոհություն են հայտնել քարտերով տրամադրվող հեռախոսային կապի թանկ գներից:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի տաքսոֆոնն այցի պահին աշխատել է, առկա է եղել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի «թեժ գծի» հեռախոսահամարին զանգ կատարելու վերաբերյալ փակցված ուղեցույց, սակայն հնարավոր չի եղել անվճար զանգահարել Պաշտպանի աշխատակազմի «թեժ գծի» հեռախոսահամարին:

***Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝***

- ***ապահովել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 116 «թեժ գծի» հեռախոսահամարին անվճար և անխոչընդոտ զանգահարելու հնարավորությունը և համապատասխան ուղեցույցի առկայությունը.***

***• ապահովել երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակների բավարար կահավորանքը և սանիտարահիգիենիկ պայմանները, ինչպես նաև դրանք ապահովել անհրաժեշտ պարագաներով.***

***• ապահովել կարճատև տեսակցությունների համար նախատեսված սենյակի բավարար կահավորանքը, ինչպես նաև միաժամանակյա կարճատև տեսակցությունների կազմակերպման դեպքում՝ առանձնանալու հնարավորությունը.***

***• ապահովել երկարատև տեսակցությունների ընթացքում բացօդյա զբոսանքի իրավունքը՝ նախատեսելով դրա համար առանձին զբոսաբակեր.***

***• երկարատև տեսակցությունների դեպքում երեխաների համար նախատեսել առանձնացված մանկական սենյակ:***

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանում պահվող ազատությունից զրկված անձանց համար նախատեսված է 4 զբոսաբակ, որոնք կահավորված են նստարանով, աղբամանով և եղանակային վատ պայմաններից պաշտպանվելու համար ծածկերով:

Չնայած համապատասխան ծածկերի առկայությանը՝ այցի պահին արձանագրվել է, որ անձրևի հետևանքով որոշ զբոսաբակերի նստարաններն ամբողջությամբ եղել են թրջված: Զբոսաբակերում մարմնամարզությամբ զբաղվելու սարքավորումներ չեն արձանագրվել:

Ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ վերջիններս տեղեկացված են զբոսանքից միայն 1 ժամ տևողությամբ օգտվելու իրավունքի մասին և հավելել են, որ իրենց սովորաբար զբոսանքի հնարավորություն տրամադրվում է մինչև 40 րոպե տևողությամբ:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի պարզաբանմամբ՝ ազատությունից զրկված անձինք իրենք են հաճախ հրաժարվում զբոսանքից օգտվելուց, որը կարող է պայմանավորված լինել նաև եղանակային վատ պայմաններով:

Հանգստի, այդ թվում՝ բացօդյա զբոսանքի իրավունքը երաշխավորված է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային փաստաթղթերում:

Զբոսանքի ընթացքում ազատությունից զրկված անձանց մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորության տրամադրման կարևորությանն անդրադարձ է կատարվել նաև Եվրոպական բանտային կանոններում: Նշված փաստաթղթի 27.3-րդ և 27.4-րդ կանոնները նախատեսում են, *որ ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացմանն ուղղված համապատասխան միջոցառումները, մարզվելու և ժամանցի համար հնարավորությունների ապահովումը պետք է կազմեն ազատությունից զրկման վայրի ռեժիմի մի մասը, իսկ ազատությունից զրկման վայրի ղեկավարությունը պետք է նպաստի դրան՝ ապահովելով համապատասխան սարքերով և սարքավորումներով:*

Այսպես, Նելսոն Մանդելայի կանոնների 23-րդ կանոնի համաձայն՝ *բոլոր ազատությունից զրկված անձինք, ովքեր ներգրավված չեն բացօդյա աշխատանքներում, ունեն ամենօրյա՝ մեկ ժամից ոչ պակաս տևողությամբ բացօդյա մարմնամարզությամբ զբաղվելու իրավունք:*

Նույն կանոնի 2-րդ մասն ամրագրում է, որ *անչափահաս և այդ տարիքային խմբին համապատասխան մյուս ազատությունից զրկված անձանց համար, ովքեր գտնվում են ֆիզիկապես լավ վիճակում, պետք է ապահովել մարզանքի և խաղերի հնարավորություն: Դրա համար պետք է ունենալ անհրաժեշտ հրապարակներ, սարքեր և գույք:*

Քննարկվող իրավունքն հստակ ամրագրում է ստացել նաև ներպետական օրենսդրությունում: Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ *դատապարտյալն իրավունք ունի՝ (...) հանգստի, ներառյալ՝ բացօդյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի:*

Նույնաբովանդակ դրույթ է ներառում նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 87-րդ կետի համաձայն՝ *կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար նախատեսված զբոսանքի վայրերը պետք է հարմարեցված լինեն ֆիզիկական վարժությունների, զանազան խաղերով ու սպորտով զբաղվելու համար:*

Ըստ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ *ձերբակալված կամ կալանավորված կանայք և անչափահասներն օգտվում են ամենօրյա՝ երկու ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվել մարմնամարզությամբ:*

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ (...) *անչափահաս դատապարտյալն օգտվում է առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից:* Ինչպես արդեն նշվել է, առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից օգտվում են նաև ձերբակալված կամ կալանավորված անչափահաս անձինք:

Այստեղ առկա է նաև ձերբակալված կամ կալանավորված կանանց ու կին դատապարտյալներին տրամադրվող զբոսանքի տևողության տարբերակման խնդիր: Այսպես, եթե ձերբակալված կամ կալանավորված կանայք օգտվում են ամենօրյա՝ 2 ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, ապա կին դատապարտյալների համար նման իրավունք նախատեսված չէ: Այս մասին նշվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության 2017 թվականի զեկույցում:

***Վերը շարադրվածի հիման վրա անհրաժեշտ է՝***

- ***«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի զբոսաբակերում ստեղծել բացօդյա զբոսանքի լիարժեք հնարավորություն, այդ թվում՝ ներառելով անբարենպաստ եղանակային պայմաններից պատսպարվելու պատշաճ ծածկեր.***
- ***քրեակատարողական հիմնարկում նախատեսված զբոսանքի վայրերը կահավորել մարմնամարզությամբ, խաղերով ու սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պարագաներով.***
- ***ապահովել միասնական օրենսդրական մոտեցում ազատությունից զրկված կանանց զբոսանքի տևողության հարցում, որը կանաց հնարավորություն կընձեռի,***

***անկախ կալանավորված կամ դատապարտված լինելուց, օգտվել ամենօրյա՝ երկու ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից:***

## 6. Զբաղվածությունը

Քրեակատարողական հիմնարկի մեկուսարանում պահվող գրեթե բոլոր անձինք նշել են զբաղվածություն՝ որպես առանձին խնդիր: Սա իր հերթին առաջացնում է հոգեճնշող վիճակ, լրացուցիչ լարվածություն, գերգրգռվածություն կամ զայրույթ, սթրես կամ հիասթափություն:

Ըստ ազատությունից զրկված անձանց՝ ընտանիքներից կտրված լինելը բերում է մշտական մտածմունքների, անհանգստությունների և ընկճվածության, իսկ զբաղվածության բացակայությունը՝ վարքագծային և հուզական շեղումների ու պոռթկումների, որը կարող է ուղղակիորեն անդրադառնալ իրենց կարգապահության վրա:

Զբաղվածության բացակայությունը կարող է նաև միջանձնային լարված հարաբերությունների պատճառ դառնալ:

Մեկուսարանում պահվող ազատությունից զրկված որոշ անձինք զբաղվում են ընթերցանությամբ: Գրականություն ստանում են ազգականներից. քրեակատարողական հիմնարկի գրադարանից չեն օգտվում՝ նոր և իրենց համար հետաքրքիր գրքերի բացակայության պատճառով: Երբեմն զբաղվում են նաև ասեղնագործությամբ:

Ընդհանուր առմամբ, քրեակատարողական հիմնարկի մեկուսարանում պահվող ազատությունից զրկված անձանց միակ զբաղմունքը հեռուստացույց դիտելն է:

Որպես զբաղմունքի միջոց՝ քրեակատարողական հիմնարկում նախատեսված է մարզասրահ, որը կահավորված է 3 մարզահեծանիվներով, ինչպես նաև էլեկտրական վազքուղիով, որն այցի պահին անսարք է եղել: Մարզասրահից օգտվելու կանոնակարգված ընթացակարգ քրեակատարողական հիմնարկում առկա չէ:

Առանձնազրույցների արդյունքները վկայում են, որ ազատությունից զրկված փոքր թվով անձինք են օգտվում մարզասրահից:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց զբաղվածությունն ապահովող միջոցառումները կամ դասընթացները կարճաժամկետ են և ոչ պարբերական:

Քրեակատարողական հիմնարկի խոհանոցում աշխատում են կին դատապարտյալներ: Հիմնարկի տարածքում սանիտարահիգիենիկ մաքրման աշխատանքներում (սանհանգույցների, աղբահանության) ևս ներգրավված են կին դատապարտյալներ:

Դատապարտյալների հիմնական զբաղմունքը հեռուստացույցի դիտումը, գրականության ընթերցումը, մասնաշենքերի բակային տարածքների բարեկարգումն է: Կանանց տեղամասի 2-րդ հարկում գործում է գրադարան, որտեղ աշխատում է կին դատապարտյալ: Առաջին հարկի հանդիսությունների սենյակում առկա է թենիսի սեղան:

Քրեակատարողական հիմնարկում գործում են կավագործության, նկարչության և այլ խմբակներ:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հիմնարկում իրականացվում են «Առողջ ապրելակերպ», «Սոցիալական ուսուցում և կյանքի հմտություններ», «Դեկորատիվ կիրառական արվեստ» դասընթացները, անչափահաս դատապարտյալների հետ իրականացվում է նաև «Հիմնական գրագիտություն/ հայոց լեզու, գրականություն և մաթեմատիկա» դասընթացը:

Առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված անձինք, սակայն, չեն նշել այդ դասընթացներին մասնակցելու մասին:

Դատապարտյալներին անհանգստացնող հիմնական հարցերից է ազատության մեջ իրենց զբաղվածության՝ աշխատանքի, ինչպես նաև կայուն հեռանկարների հիմնախնդիրը: Հիմնարկում գործում են կավագործության խմբակն ու գրական խմբակը՝

դատապարտյալներից մեկի նախաձեռնությամբ, որոնք կարող են հանդես գալ որպես աշխատանքային թերապիայի միջոցներ: Միևնույն ժամանակ, կավագործության հմտությունները դատապարտյալների՝ ազատության մեջ զբաղվածության հարցերն արդյունավետորեն լուծելու առումով արժեքավոր չեն:

Դրական պետք է համարել, որ գործում է կրակայրիչների արտադրամաս: Այն, սակայն, փոքր է, որտեղ մեկ պատրաստված կրակայրիչի դիմաց դատապարտյալը ստանում է 1,5 դրամ: Դատապարտյալներից շատերը պատրաստ են սովորել և աշխատել, այդ թվում՝ օտար լեզուների, համակարգչային հմտությունների ձեռքբերման և կիրառման ոլորտում: Ուստի պետք է զարգացնել այս հնարավորությունները քրեակատարողական հիմնարկում:

Պատիժը կրելուց հետո հասարակական կյանքին արդյունավետ վերաինտեգրման նպատակով անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկում կազմակերպել այնպիսի դասընթացներ, որոնք կնպաստեն դատապարտյալ կանանց՝ ապագայում աշխատաշուկայում որոշակի կանխատեսելի հնարավորություններ ունենալուն (օրինակ՝ վարսահարդարության, հագուստի դիզայն, համակարգչային հմտություններ և այլն):

***Ուստի, անհրաժեշտ է բարձրացնել զբաղվածության մակարդակը՝ ազատությունից զրկված անձանց ներգրավելով տարբեր բնույթի նպատակային զբաղմունքներում (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն):***

## 7. Տարբերակված մոտեցում

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանում պահվող ազատությունից զրկված կանայք Պաշտպանի ներկայացուցիչների հետ առանձնազրույցների ընթացքում տեղեկացրել են, որ քրեակատարողական հիմնարկում առկա են տարբերակված մոտեցման դեպքեր: Մասնավորապես, ազատությունից զրկված որոշ անձանց թույլատրվում է խցում ունենալ և օգտագործել մազերը չորացնելու

էլեկտրական սարք, արդուկ, ինչպես նաև էլեկտրական սալօջախ, իսկ մյուսներին՝ ոչ՝ այդ սարքերն արգելված իր լինելու պատճառաբանությամբ:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից ստուգմամբ արձանագրվել է, որ վերը նշված սարքավորումները որոշ խցերում առկա են, իսկ որոշներում՝ ոչ:

Այս կապակցությամբ Բանգկոկյան կանոնների 1-ին կանոնի համաձայն՝ *խտրականության արգելքի սկզբունքը գործնականում կիրառելու նպատակով պետք է հաշվի առնել ազատությունից զրկված կանանց առանձնահատուկ կարիքները*:

***Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է բացառել ազատությունից զրկված անձանց նկատմամբ տարբերակված մոտեցման որևէ դրսևորում:***

## 8. Ազատությունից զրկված անչափահաս անձանց պահման պայմանների և նրանց նկատմամբ վերաբերմունքի առանձնահատուկ պահանջները

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հատուկ ուղղություն է անչափահասների իրավունքների պաշտպանությունն ազատությունից զրկման կամ նրանց պահման այլ վայրերում: Այստեղ Պաշտպանի աշխատակազմի կողմից աշխատանքներն իրականացվում են հատուկ մեթոդաբանությամբ՝ ոլորտում մասնագիտացած անկախ փորձագետների մասնակցությամբ և հիմնված են միջազգային չափանիշների վրա:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկ կատարված մշտադիտարկման այցի պահին արձանագրվել է հիմնարկում պահվող՝ կալանավորված անձի կարգավիճակ ունեցող 17 տարեկան 1 անչափահաս:

Առանձնազրույցի ընթացքում ազատությունից զրկված անչափահասը տեղեկացրել է, որ անազատության մեջ է շուրջ 2 տարի 4 ամիս, գործը գտնվում է դատաքննության փուլում, սակայն դատավճիռ դեռ չի կայացվել: Վերջինս նշել է, որ պահվում է միայնակ,

քանի որ 2018 թվականի հունվար ամսից սկսված «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված այլ անչափահաս չի պահվել:

Ելնելով անչափահասների նկատմամբ վերաբերմունքի ու նրանց պահման պայմանների վերաբերյալ հատուկ պահանջներից՝ հարկ է նախևառաջ անդրադառնալ նրանց կրթության իրավունքի իրացմանը: Մասնավորապես, վերը նշված կոնկրետ դեպքում Պաշտպանի ներկայացուցիչների հետ առանձնազրույցի ընթացքում անչափահասն ինքը նշել է, որ ավարտել է 9-րդ դասարանը, ավագ դպրոց չի հաճախել, իսկ անազատության մեջ պահելու վայրում իր հետագա ուսումը կազմակերպելու հնարավորություն առկա չէ: Ավելին, քրեակատարողական հիմնարկի քննարկումների ընթացքում պարզվել է, որ ազատությունից զրկված անչափահասների միջնակարգ կրթությունն ապահովելու ուղղությամբ հիմնարկում դեռ միջոցներ չեն ձեռնարկվել:

ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք*:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ՝ *միջնակարգ կրթությունը պարտադիր է*: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ *դատապարտյալն ունի հնարավոր և օրենքով նախատեսված կրթություն ստանալու իրավունք*: Նույնաբովանդակ դրույթ է նախատեսված նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով:

ԽԿԿ-ի 2-րդ ընդհանուր զեկույցում նշված է, որ *ազատությունից զրկված անձանց նորմալ կեցության համար ծայրահեղ կարևոր է իրագործել միջոցառումների բավարար ծրագրեր (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն): Այս ծրագրերի իրականացումը կարևոր է բոլոր հիմնարկների համար անկախ նրանից, թե ում համար են դրանք նախատեսված՝ դատապարտյալների, թե կալանավորվածների*[15]:

Հարկ է նշել, որ ԽԿԿ-ի համաձայն՝ *ազատությունից զրկված բոլոր անչափահասները պետք է պահվեն իրենց տարիքի համար հատուկ նախատեսված*

[15] Տե՛ս https://rm.coe.int/1680696a3f կայքէջում, կետ 47:

*հիմնարկներում, որոնք ունեն անչափահասների կարիքներին հարմարեցված ռեժիմներ, և որտեղ անչափահասների հետ վարվեցողության կապակցությամբ վարչակազմը վերապատրաստված է: Ավելին, անչափահասների համար նախատեսված ազատությունից զրկման վայրերում պետք է հատուկ ջանքեր գործադրվեն երկարաժամկետ սոցիալական մեկուսացման ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ: Սա ենթադրում է բազմակողմանի մոտեցում՝ օգտագործելով մի շարք մասնագետների (այդ թվում՝ ուսուցիչներ, դասընթացավարներ, հոգեբաններ) հմտություններն անչափահասների անհատական կարիքներն անվտանգ կրթական և սոցիալ-թերապևտիկ միջավայրում ապահովելու նպատակով*[16]*:*

Ազատությունից զրկված անձանց օգտակար բնույթի բավարար աշխատանքով ապահովելու, ժամանցի հնարավորություն ընձեռելու (սպորտ, խաղեր, մշակութային միջոցառումներ և ժամանցի այլ ձևեր), կրթական ծրագրերը հասանելի դարձնելու վերաբերյալ պահանջներ են բովանդակում նաև Եվրոպական բանտային կանոնները[17]:

Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ *ազատությունից զրկման ցանկացած վայրում պետք է ապահովվեն ազատությունից զրկված բոլոր անձանց հասանելիությունը կրթական ծրագրերին՝ հնարավորինս ապահովելով դրանց բազմակողմանիությունը և հաշվի առնելով անձի անհատական պահանջմունքներն ու ցանկությունները: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ազատությունից զրկված անչափահասների կրթությանը*[18]*:*

ԽԿԿ-ն շեշտել է, որ *անչափահասները ֆիզիկական գործունեության և մտավոր խթանման հատուկ կարիք ունեն: Անկախ նրանց ազատությունից զրկման ժամանակահատվածից՝ նրանց պետք է առաջարկվի կրթության, սպորտի, մասնագիտական դասընթացների, հանգստի և այլ նպատակային զբաղվածության*

---

[16] Տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 9-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1998 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածը https://rm.coe.int/1680696a73 կայքէջում, կետ 28:

[17] Տե՛ս https://rm.coe.int/16806f5b92 կայքէջում, կանոններ 26.1-26.3, 26.6, 26.9, 26.10, 27.3, 27.6, 28.1-28.5 և այլն:

[18] Տե՛ս https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae կայքէջում, կանոններ 28.1 և 28.3:

*լիարժեք ծրագիր: Ֆիզիկական կրթությունը պետք է լինի այդ ծրագրի կարևոր մասը*[19]:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված և ազատազրկման դատապարտված անչափահասների թիվը, ընդհանուր առմամբ, փոքր է: Համեմատության համար նշենք, օրինակ, 2016 թվականի հոկտեմբերի դրությամբ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվել է 3 անչափահաս, 2017 թվականի դեկտեմբերի դրությամբ՝ 5 անչափահաս[20], իսկ այցի պահին՝ 1 անչափահաս: Նման պարագայում, ազատությունից զրկված այլ անչափահասների բացակայության և անչափահասներին չափահասներից անջատ պահելու կանոնի կիրառման արդյունքում անչափահասը պահվում է միայնակ՝ առանց այլ անձի հետ շփման հնարավորության:

Նելսոն Մանդելայի կանոնների համաձայն՝ *մեկուսացում ասելով պետք է հասկանալ ազատությունից զրկված անձանց առանց մարդկային բավարար շփման օրվա ընթացքում 22 ժամ և ավելի մեկուսի պահելը, իսկ երկարաժամկետ մեկուսացման տակ պետք է հասկանալ ազատությունից զրկված անձին 15 օրը գերազանցող ժամանակահատվածով մեկուսացնելը*[21]:

Դրա հետ միասին, պետք է ընդգծել, որ մարդկային բավարար շփում չի կարող համարվել քրեակատարողական ծառայողի կողմից անչափահասին սննդի փոխանցումը կամ հսկողության նպատակով խցի դիտարկումը: Դրա հետ մեկտեղ քրեակատարողական հիմնարկի սոցիալ-հոգեբանական ոլորտի աշխատակիցների հետ զրույցները, զբոսանքը, ոչ պարբերական և չհամակարգված դասընթացները (նկարչություն, կավագործություն) միջնակարգ կրթության և նպատակաուղղված կրթական և սպորտային ծրագրերի բացակայության պայմաններում չեն կարող ապահովել անչափահասի բավարար մարդկային շփումը:

---

[19] Տե՛ս Ալբանիայի վերաբերյալ 2010 թվականի ԽԿԿ-ի զեկույցը https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680667783 կայքէջում, կետ 66:

[20] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականների գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը, էջ 85:

[21] Տե՛ս https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/GA-RESOLUTION/E_ebook.pdf կայքէջում, կանոն 44:

Ըստ ԽԿԿ-ի՝ *նպատակային զբաղմունքների բացակայությունը հատկապես վնասակար է ազատությունից զրկված անչափահասների համար, ովքեր ֆիզիկական ակտիվության և մտավոր խթանման հատուկ կարիք ունեն: Ազատությունից զրկված անչափահասներն օրվա ընթացքում պետք է ապահովվեն կրթական, սպորտային, մասնագիտական դասընթացների, հանգստի և արտախցային այլ նպատակային գործունեության ամբողջական ծրագրերով*[22]:

Այս հարցի առնչությամբ, անչափահաս կալանավորված անձի կրթության իրավունքի պաշտպանության նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում նախաձեռնված է քննարկման ընթացակարգ՝ սեփական նախաձեռնությամբ: Պաշտպանի իրավասության շրջանակում անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում կրթության հետ կապված հարցերը պարզելու, իրավունքի իրացման ապահովմանը նպաստելու նպատակով:

Ինչպես արդեն նշվեց, արձանագրված նշված դեպքով «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող անչափահասը նախնական կալանքի տակ է գտնվում շուրջ 2 տարի 4 ամիս:

Առաջնորդվելով բացառապես Պաշտպանին վերապահված իրավական կարգավիճակով և առանց կոնկրետ գործով դատական վարույթին միջամտության, այդուհանդերձ հարկ ենք համարում այդ օրինակով վկայակոչել միջազգային այն չափանիշները, որոնք չեն ընդունում անչափահասի երկարաժամկետ պահելն անազատության մեջ և խրախուսում են ազատությունից զրկման այլընտրանքային միջոցների կիրառումը հատկապես անչափահասների նկատմամբ:

Այսպես, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989 թվականի կոնվենցիայի 37-րդ հոդվածի տեսանկյունից, համաձայն որի՝ *անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել միայն որպես ծայրահեղ միջոց՝ հնարավորինս սեղմ ժամկետով*[23]: ՄԱԿ-ի 1990 թվականի դեկտեմբերի 14-ի Ազատությունից զրկման

[22] Տե՛ս ԽԿԿ գործունեության վերաբերյալ 24-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 2013 թվականի օգոստոսի 1-ից 2014 թվականի դեկտեմբերի 31-ը, https://rm.coe.int/1680696a9c կայքէջում, կետ 107:
[23] Տե՛ս https://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/crc.pdf կայքէջում:

հետ չկապված խափանման և պատժի միջոցների վերաբերյալ ստանդարտ նվազագույն կանոնները (այսուհետ՝ Տոկիոյի կանոններ) խրախուսում են այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը, հատկապես՝ անչափահասների պարագայում:

Անչափահասին տևական ժամանակ անազատության մեջ պահելը, հատկապես մեկուսացման և բավարար մարդկային շփման բացակայության պայմաններում, կարող է խախտել ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքը:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խուցը, որտեղ այցի պահին պահվել է անչափահասը, ունի 13 մ$^2$ մակերես՝ կահավորված երկու երկհարկանի մահճակալներով, խցի որոշ հատվածներում, այդ թվում՝ սանհանգույցում, ծեփամածիկը տեղ-տեղ թափված է եղել, հատակը՝ փայտե և հնամաշ: Քրեակատարողական հիմնարկի ծառայողների հետ տեղի ունեցած քննարկմամբ պարզվել է, որ ազատությունից զրկված անչափահաս անձանց համար առանձին խցեր նախատեսված չեն, և վերջիններիս տեղաբաշխումն ունի իրավիճակային բնույթ և պայմանավորված է ազատ խցերի առկայությամբ կամ բացակայությամբ:

**Հետևաբար, անընդունելի է, որ ազատությունից զրկված անչափահաս անձինք ոչ միայն պահվում են «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կանանց մեկուսարանի մասնաշենքում, այլև առկա չեն անչափահասների համար նախատեսված հատուկ խցեր՝ վերջիններիս տարիքին և առանձնահատուկ կարիքներին համապատասխան պայմաններով:**

Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ *անչափահասները պետք է պահվեն իրենց համար հատուկ նախատեսված հաստատություններում և չպետք է պահվեն չափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկներում*[24]:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական

[24] Տե՛ս https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae կայքէջում, կանոն 11.1:

ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման հավելվածի 85-րդ կետի համաձայն՝ *անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար նախատեսված խցերում կամ կացարաններում տեղադրվում են միահարկ մահճակալներ:*

***Ուստի, անհրաժեշտ է՝***

- ***անհապաղ քայլեր ձեռնարկել ՀՀ իրավական համակարգում հատկապես անչափահասների նկատմամբ ազատությունից զրկման հետ կապված խափանման և պատժի միջոցները՝ միայն որպես բացառիկ միջոց ներդնելու ուղղությամբ.***
- ***ապահովել ազատությունից զրկված անչափահասների կրթության (այդ թվում՝ միջնակարգ) իրավունքի պատշաճ իրացումը,.***
- ***անազատության մեջ գտնվող անչափահասների համար կազմակերպել պարբերական, համակարգված և նպատակաուղղված դասընթացներ ու միջոցառումներ (կրթական, մշակութային, սպորտային և այլն).***
- ***քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անչափահաս այլ անձանց բացակայության պայմաններում ապահովել մեկուսացած պահվող ազատությունից զրկված անչափահաս անձանց՝ մարդկային անհրաժեշտ շփումը.***
- ***նախատեսել ազատությունից զրկված անչափահաս անձանց համար նախատեսված առանձին խցեր՝ ապահովելով պահման պատշաճ պայմաններ:***

# ԳԼՈՒԽ 3.
# ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## 1. Քրեակատարողական հիմնարկի անձնակազմը

Մարդու իրավունքների պաշտպանությունը համակողմանի գործընթաց է, որը ենթադրում է այդ գործընթացի բոլոր մասնակիցների իրավունքների երաշխավորում, նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի ապահովում և փոխադարձ հարգանք երաշխավորող հարաբերությունների հաստատում: Այս սկզբունքային մոտեցման բաղադրիչներից է իրավասու այն մարմինների աշխատակիցների, ծառայողների իրավունքների վիճակը, ովքեր իրենց գործունեությամբ կոչված են իրականացնել հասարակության անդամների իրավունքների պաշտպանությունը:

Նշվածն, իհարկե, վերաբերում է նաև քրեակատարողական ծառայողներին, նրանց աշխատանքային արժանապատիվ պայմաններին ու սոցիալական երաշխիքներին, այդ թվում՝ աշխատավարձին: Առանց այս երաշխիքների պատշաճ ապահովման գործնականում բարդ է ակնկալել բարձր իրավապաշտպան արդյունքներ: Ուստի այս հարցերը սույն զեկույցի շրջանակներում դարձել են առանձին քննարկման առարկա:

Խնդրի վերաբերյալ ամբողջական պատկերացում ձևավորելու նպատակով անհրաժեշտ է նախևառաջ անդրադառնալ քրեակատարողական ծառայող-ազատությունից զրկված անձ հարաբերակցությանը: Մասնավորապես, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի հաստիքացուցակի ուսումնասիրությունը վկայում է, որ ազատությունից զրկված կանանց հետ անմիջական շփման մեջ գտնվող հերթապահ խմբի աշխատանքներում ընդգրկված է 16 ծառայող, իսկ անվտանգության ապահովման բաժնի աշխատանքներում՝ 51 ծառայող: Նշված բաժինների աշխատանքները կազմակերպվում են 4 հերթափոխով: Ցերեկային ժամերին նշված ստորաբաժանումների

աշխատանքներում ընդհանուր առմամբ ընդգրկված է 20-21 քրեակատարողական ծառայող, իսկ գիշերային ժամերին՝ 12-13 ծառայող:

Եթե հիմք ընդունենք, որ մշտադիտարկման հիմնական այցի ընթացքում արձանագրված 116 ազատությունից զրկված անձի առկայությունն «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում, ապա քրեակատարողական ծառայող-ազատությունից զրկված անձ հարաբերակցությունը դառնում է խնդրահարույց: Այս մասին է վկայում նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը:

Այսպես, Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ *քրեակատարողական հիմնարկներում պատշաճ կարգուկանոնը պետք է պահպանել՝ հաշվի առնելով անվտանգության, ապահովության և կարգապահության պահանջները*[25]:

Անվտանգության, ապահովման և կարգապահության կարևոր երաշխիք է համապատասխան որակավորում ունեցող և պատշաճ վերապատրաստում անցած անձնակազմի համապատասխան քանակի առկայությունը[26]: ԽԿԿ-ն իր զեկույցներում բազմիցս ընդգծել է, որ *վատ վերաբերմունքը կարող է դրսևորվել բազմաթիվ ձևերով, որոնք հաճախ ոչ թե կանխամտածված, այլ կազմակերպչական թերությունների կամ մարդկային ռեսուրսների անբավարարության հետևանք են*[27]*:*

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարն իր զեկույցներում ևս անդրադարձել է քրեակատարողական հիմնարկների եվրոպական երկրներում գործող ազատությունից զրկված անձ-քրեակատարողական հիմնարկի հսկիչ հարաբերակցությունը, որն ընդհանուր առմամբ հանգում է *1 քրեակատարողական ծառայող 4 ազատությունից զրկված անձին*[28]:

---

[25] Տե՛ս https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae կայքէջում, կանոն 49:

[26] Տե՛ս ԽԿԿ 2-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1991 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը, https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae կայքէջում, կետ 59 և ԽԿԿ 11-րդ ընդհանուր զեկույց, որն ընդգրկում է 2000 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը, https://rm.coe.int/1680696a75 կայքէջում, կետ 26:

[27] Տե՛ս ԽԿԿ 2-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1991 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը, https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae կայքէջում, կետ 44:

[28] Տե՛ս Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի՝ Ռումինիայի վերաբերյալ 2002-2005թթ. զեկույցը https://rm.coe.int/16806db7b0 կայքէջում, կետ 14:

**Այսպիսով, մարդու իրավունքների եվրոպական չափանիշներն ընդունելի են համարում քրեակատարողական հիմնարկի աշխատակից-ազատությունից զրկված անձ 1-4 հարաբերակցությունը:**

**Ընդ որում, կարևոր է այն անձնակազմի համապատասխան քանակի առկայությունը, որն ունի մասնագիտական պատշաճ գիտելիքներ և անցել է անհրաժեշտ վերապատրաստում: Քրեակատարողական հիմնարկում ոչ բավարար անձնակազմի առկայությունը կարող է ընդհանուր առմամբ հանգեցնել վարչակազմի կողմից իր լիազորությունների ոչ պատշաճ իրականացմանը և ոչ ապահով միջավայրի ստեղծմանը:**

Ավելին, խնդրահարույց է նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ազատությունից զրկված կանանց հետ անմիջական շփման մեջ գտնվող քրեակատարողական ծառայողների հարաբերակցությունը սեռի հատկանիշով:

Այսպես, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի տրամադրած փաստաթղթերը վկայում են, որ հիմնարկի հերթապահ խմբի 16 հաստիքներից միայն 2-ն են զբաղեցված իգական սեռի ծառայողներով, իսկ անվտանգության ապահովման բաժնի 51 հաստիքներից՝ ընդամենը 19-ը:

**Կանանց համար նախատեսված քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված կանանց հետ անմիջական շփման մեջ գտնվող քրեակատարողական ծառայողների նման հարաբերակցությունն անընդունելի է:**

***Ուստի, անհրաժեշտ է՝***

- ***«Աբովյան» քրեակատարողական հիմնարկն ապահովել բավարար քանակի անձնակազմով.***
- ***ապահովել քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված կանանց հետ անմիջական շփման մեջ գտնվող իգական սեռի քրեակատարողական ծառայողների բավարար հարաբերակցություն:***

## 2. Քրեակատարողական հիմնարկի ծառայողների աշխատանքի պայմանները

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ կանանց մասնաշենքի հսկիչ կետի աշխատակիցների համար ստեղծված չեն աշխատանքի բավարար պայմաններ: Մասնավորապես, քրեակատարողական հիմնարկի մոտակայքում աշխատակիցների համար սննդի կետերի բացակայության պայմաններում ծառայողները տանից բերում են չոր սննդամթերք, որի տաքացման հնարավորություն առկա չէ: Սա նույնպես կարող է լրացուցիչ լարվածություն առաջացնել աշխատակիցների և ազատությունից զրկված անձանց հարաբերություններում:

Միաժամանակ, հսկիչ կետի ծառայողների համար նախատեսված չէ առանձնացված սանհանգույց: Սրա պատճառով քրեակատարողական հիմնարկի իգական սեռի ծառայողներն օգտվում են երկրորդ հարկում դատապարտյալների համար նախատեսված սանհանգույցից, իսկ արական սեռի ծառայողներն օգտվում են կանանց տեղամասի առաջին հարկի սանհանգույցից, որի մուտքն ազատությունից զրկված կանանց լոգասենյակի հանդերձարանից է բացվում:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից արձանագրվել են քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչների աշխատասենյակների անբավարար պայմաններ: Առկա է այդ սենյակներում վերանորոգման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն:

Այցի ընթացքում մի քանի աշխատակիցներ նշել են, որ ծառայողական համազգեստը տրվում է երկու տարին մեկ անգամ, ինչը բավարար չէ: Արդյունքում, նրանք ստիպված են լինում այդ ժամանակահատվածում ևս մեկ-երկու համազգեստ գնել:

Այցի պահին 4 հերթափոխային բուժքույրերից մեկը գտնվել է արձակուրդում, մյուսը՝ հիվանդության պատճառով եղել է ժամանակավոր անաշխատունակ: Մյուս երկու բուժքույրերն աշխատել են օրը մեջ գրաֆիկով, սակայն արտաժամյա աշխատանքի համար չեն վարձատրվել:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184-րդ հոդվածի համաձայն՝ *արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար, ժամային դրույքաչափից բացի, վճարվում է հավելում՝ ժամային դրույքաչափի 50 տոկոսից ոչ պակաս չափով, իսկ գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար՝ ոչ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով:*

Վերը նշված օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը, չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:*

Ըստ նույն հոդվածի 4-րդ մասի՝ *առանձին կատեգորիայի աշխատողների աշխատաժամանակի տևողությունը կարող է կազմել օրական 24 ժամ: Այդ աշխատողների աշխատաժամանակի միջին տևողությունը շաբաթվա ընթացքում չի կարող անցնել 48 ժամից, իսկ աշխատանքային օրերի միջև հանգստի ժամանակը չի կարող պակաս լինել 24 ժամից:* Նման աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Քրեակատարողական համակարգում վերանայման և համակարգային փոփոխությունների կարիք ունեն նաև քրեակատարողական ծառայողների բավարար և համաչափ աշխատավարձի, ինչպես նաև խրախուսման ճկուն մեխանիզմների ստեղծման հարցերը: Այս լուծումներն անմիջական դրական նշանակություն կունենան քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման վիճակի, անմարդկային վերաբերմունքի և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման տեսանկյունից:

***Ուստի, անհրաժեշտ է՝***

- ***հիմնովին բարելավել քրեակատարողական համակարգի ծառայողների սոցիալական երաշխիքների համակարգը, այդ թվում՝ կապված աշխատավարձի հետ.***
- ***ապահովել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ծառայողների համար բավարար աշխատանքային պայմաններ, ներառյալ՝ բավարար պայմաններով***

*աշխատասենյակներ, սննդի ընդունման պատշաճ պայմաններ, բավարար սանիտարահիգիենիկ պայմաններով սանհանգույցներ՝ բացառելով արական սեռի քրեակատարողական ծառայողների մուտքը կանանց լոգասենյակի հանդերձարան.*

*• լրացուցիչ հերթապահությունները կազմակերպել ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դրույթներին համապատասխան:*